I

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՎԵԴԵՐԵՑԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ (XIII Դ.)

Այս ժամանակագրությունը գտնվում է Մատենադարանի թղթի ամենահնագույն ձեռագրի (№ 2679) 157ա—163ա էջերում[1]*, թե ով է եղել ժամանակագրության հեղինակը և երբ են այն կազմել, իմանում ենք ժամանակագրության վերջում թողած հետևյալ հիշատակարանից.*

«Տէր Յիսուս Քրիստոս....ողորմէա....Աղիզմամին... և մեղաւոր աւագէրէց Յովաննիսի որդւոյ Գիշի, որ զգրկունքս գնեցի և յետ ՄՄԴ ամի, զցանկս յաւրինէցի ի ՈՀԴ թուականիս» *(էջ 163ա)։ (Ընդգծումը մերն է—Վ. Հ.)։*

Ուրեմն, Գիշի որդի Հովհաննես ավագերեցը № 2679 ժողովածուի ընդօրինակությունից 254 տարի հետո, 1225 թ., գնել է այն և ապա կազմել սույն ժամանակագրությունը։ Ժամանակագրությունը կազմված է սյունակաձև. առաջին սյունակում նշված են մեր թվականության տարիները՝ 1 թ. մինչև 556 թ., այնուհետև այդ սյունակի շարունակությունը լրացվում է հայկական տոմարի տարեթվերով՝ մինչև ՆՁԱ (1032) թվականը։ Երկրորդ սյունակում նշված են հռոմեական և ապա բյուզանդական կայսրների գահակալության տարիների ժամանակը, երրորդ սյունակում՝ պարսկական, հայկական թագավորների և հայկական կաթողիկոսների իշխանության ու աթոռակալության տարիները, այնուհետև առանձին եղելություններ նշված են նաև սյունակների աջ ու ձախ կողերում։ Ցուրաքանչյուր էջում ընագիրը զետեղված է երկու շարքով, իսկ յուրաքանչյուր շարքը բաղկացած է երեք սյունակից (բացառությամբ 159-րդ թերթի, որը չորս սյունակ է)։ Բնագրի օգտագործումը հեշտացնելու նպատակով յուրաքանչյուր կարգը հրատարակում ենք առանձին էջերի վրա, էջի վերևում նշելով a *և* b *տառերը։*

Ժամանակագրությունն սկսվում է 1 թ. (մ. թ.) և հասնում մինչև 1032 թ.։ Բնագրում, սրանից հետո, սյունակների մեջ տարեթվերի նշումը շարունակվում է, բայց դրանց դիմաց վկայություններ չեն նշված, հենց այդտեղ էլ, 163ա էջում գտնվում է վերը բերված հիշատակարանը։ Ժամանակագրության մեջ հեղինակին ժամանակակից և նրան ժամանակով մոտ շրջանի մասին դժբախտաբար ոչ մի տեղեկություն չկա։ Եղած վկայությունները խիստ համառոտ են, իսկ երբեմն էլ ձեռագրի հնությունից փնաս-

[1] *Այս ձեռագրի մասին տես Տաշեան Հ. «Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք, հեաազոտութիւնք և բնագիրք», մասն առաջին, Վիեննա, 1895, էջ 202, 295—296, Գալուստ Տէր Մկրտչեան «Անանիա Շիրակացի», Վաղարշապատ, 1896, էջ 1։*

ված։ Այդ պատճառով էլ ժամանակագրության աղբյուրների մասին որոշակի բան ասելը դժվար է, սակայն, կարելի է նկատել, որ մի շարք վկայություններ որոշ աղերս ունեն Եվսեբիոս Կեսարացու և Սամուել Անեցու տարեգրությունների հետ, որին կանդրադառնանք ծանոթագրություններում։ Հավանական է, Եվսեբիոս Կեսարացու քրոնիկոնի տեղեկությունները Ս. Անեցու միջոցով անցած լինեն սույն ժամանակագրությանը։

Ժամանակագրության տեղեկությունները թեև համառոտ են, բայց մի շարք վկայությունները արժեքավորը են նաև նրանով, որ այլ պատմիչների մոտ չենք հանդիպում, օրինակ, արարների և հայերի մի կռիվը 852 թ. Կաճկաքարում, կամ 902 թ. Սմբատ Ա-ի և կայսիկների կռիվը, որի մասին խոսում է Թ. Արծրունին, բայց չի նշում ճակատամարտի վայրը (Ուշի կամ Ցուշի) և այլն։

a

—Աւղոսաոս ԾԶ (56)	Ա	ԽԲ	Ա	—Աբգար ԼԶ (36)։
	Բ	ԽԴ	Բ	
	Գ	ԽԴ	Գ	
—Զաղայսն կոտորէ Հերովդէս[1]։	Դ	Խե	Դ	
	Ե	ԽԶ	Ե	
	Զ	ԽԷ	Զ	—Ցուդա Գալիլէացի ապստամբեալ էլ ի վերա Երուսաղէմի։[2]
	Է	ԽԸ	Է	
—Սով սասաիկ եղև ի Հռոմ, զրի։ն ԻԸ (28) դահեկան էլ։[3]	Ը	ԽԹ	Ը	
	Թ	Ծ	Թ	
	Ժ	ԾԱ	Ժ	
	ԺԱ	ԾԲ	ԺԱ	
	ԺԲ	ԾԳ	ԺԲ	
	ԺԳ	ԾԳ	ԺԳ	
	ԺԴ	ԾԵ	ԺԴ	
—Մահն Հղոսաոսեա ի Պաղաստին նուաղել։[4]	ԺԵ	ԾԶ	ԺԵ	
	ԺԶ	ՕՕ		
—Տերեր թաղաւորէ ամս ԻԳ (23)։ սա մեռաւ ի Մեսենա։	ԺԷ	Ա	ԺԶ	
	ԺԸ	Բ	ԺԷ	
	ԺԹ	Գ	ԺԸ	—Ի շարժմանէն ԺԳ (13) քաղաք կործանեցաւ և Եվեսոսն
	Ի	Դ	ԺԹ	
	ԻԱ	Ե	Ի	
	ԻԲ	Զ	ԻԱ	
	ԻԳ	Է	ԻԲ	
	ԻԴ	Ը	ԻԳ	
	ԻԵ	Թ	ԻԴ	
	ԻԶ	Ժ	ԻԵ	
—Պիղատոս ոստիզան եկն յԵրուսաղէմ։	ԻԷ	ԺԱ	ԻԶ	
	ԻԸ	ԺԲ	ԻԷ	
	ԻԹ	ԺԳ	ԻԸ	
—Յովհաննէս յանապատէ դա Յորդանան։	Լ	ԺԴ	ԻԹ	
	ԼԱ	ԺԵ	Լ	
	ԼԲ	ԺԶ	ԼԱ	
	ԼԳ	ԺԷ	ԼԲ	
	ԼԴ	ԺԸ	ԼԳ	—Գալ Թղթին Արգարու առ Տէր։
	ԼԵ	ԺԹ	ԼԴ	—Յիսուս գա ի Նազարեթ ապրիելի ԺԵ (15)։
—Վոամ Յաղկերաեան ԻԲ (22)։	ԼԶ	Ի	ԼԵ	
	ԼԷ	ԻԱ	ԼԶ	
	ԼԸ	ԻԲ	ԼԷ	
	ԼԹ	ԻԴ	ԼԸ	—Քաղոց ԺԹ (19) Սանատրուկ
		ՕՕ	Ա	թաղաւոր[է] ամս Լ (30)։
—| | | իոս թաղաւորէ ամս Ի (20) | | | արոս ի ա | | | արա | | | արամաս | | |[6]	Խ	Ա	ԼԹ	
			Բ	
	ԽԱ	Բ	Խ	
	ԽԲ	Գ	Գ	
		Դ	ԽԱ	
		ՕՕ	Գ	
	ԽԴ	Ա	ԽԲ	

	ԽԳ	Բ	Ը	—Սով սաստիկ եղև համաշխարհականեր։[7]
	ԽԴ	Գ	Թ	
	ԽԶ	Դ	Ժ	
	ԽԷ	Ե	ԺԱ	
	ԽԸ	Զ	ԺԲ	
	ԽԹ	Է	ԺԳ	
—Դատարուն Յոհաննու եղբաւր Յակոբա ի Հերուզիա։	Ծ	Ը	ԺԴ	
	ԾԱ	Թ	ԺԵ	
	ԾԲ	Ժ	ԺԶ	
	ԾԳ	ԺԱ	ԺԷ	—Եգիպտացին ապստամբ հանեցաւ (3000) այր առ զակս։
	ԾԴ	ԺԲ	ԺԸ	
	ԾԵ	ԺԳ	ԺԹ	
	ԾԶ	ԺԴ	Ի	
		ՈՈ		
—Նէրոն Քազ[աւորէ] ամս ԺԴ (13)։	ԾԷ	Ա	ԻԱ	—Պաւղոս կապեալ Յագրիպա առաքի Ներոն։
—Մարկոս մարտիրոսացաւ ի Բօկոդիկոսայ։	ԾԸ	Բ	ԻԲ	
	Ը	Գ	ԻԳ	
	ԸԱ	Դ	ԻԴ	
	ԸԲ	Ե	ԻԵ	
	ԸԳ	Զ	ԻԶ	
	ԸԴ	Է	ԻԷ	—Յակոբոս յԵրուսաղէմ ի Հրէից կատարեցաւ։
	ԸԵ	Ը	ԻԸ	
	ԸԶ	Թ	ԻԹ	
—Պետրոս վկաեալ ի Ներոնէ։	ԸԷ	Ժ	Լ	
			ՈՈ	
—Պաւղոս վկէ։	ԸԸ	ԺԱ	Ա	—Երուանդ [Քազ|աւորէ] ամս ԻԱ (21)։ Յազկերա Վրոամեան ԺԹ (19)։
	ԸԹ	ԺԲ	Բ	
	Ժ	ԺԳ	Գ	
		ՈՈ		
—Վեսպիանոս, սա վճարեցաւ ի Սաղուսեան բուրատան։	ԺԱ	Դ	Ե	—Յուսէպոս պատմագիր եղև։[9]
	ԺԲ	Բ	Զ	
	ԺԳ	Գ	Է	—Հրեայքն ապստամբեցին ի Վեսպիանոսէ։[9]
	ԺԴ	Դ	Ը	
	ԺԵ	Ե	Թ	—Տիտոս սա զԵրուսաղէմ։[9]

a

	ՀԶ	Զ	Ժ	
	ՀԷ	Է	ԺԱ	
	ՀԸ	Ը	ԺԲ	
	ՀԹ	Թ	ԺԳ	
	Զ	Ժ	ԺԳ	
		oo		
—Տիառս ամս Բ (2)։ սա վճա-	ԶԱ	Ա	ԺԵ	—Սեպտեմբեր՝ Գեսմանիկոս, հոգ-
ռեցաւ ի Պաղատանն։	ԶԲ	Բ	ԺԶ	տեմբեր՝ Պարթիկոս։[11]
		oo		
—Դեմետիանոս Թագ[աւորէ]	ԶԴ	Ա	ԺԷ	
ամս ԺԵ (15)։ սա սպանաւ Ան-	ԶԴ	Բ	ԺԸ	
սովաւ էր Ակիւղաս Թարգմանիչ։	ԶԵ	Դ	ԺԹ	
	ԶԶ	Դ	Ի	
	ԶԷ	Ե	ԻԱ	
			oo	—Արտաշես Թագ[աւորէ] ամս
	ԶԸ	Զ	Ա	ԽԱ (41)։
	ԶԹ	Է	Բ	
	Ղ	Ը	Դ	—Ասա է Աբիոնի, կորնթոսի,
—Յովաննէս ի Պատմիոս կղզի	ՂԱ	Թ	Դ	Նիկոդաոսի հերձուածն։
աուաւ, ուր զաեսիլն եսես.	ՂԲ	Ժ	Ե	
—Մենանդրոս աշակերտ Սիմոնի։	ՂԴ	ԺԱ	Զ	
	ՂԴ	ԺԲ	Է	
	ՂԵ	ԺԴ	Ը	—Ազգն Դաւթի կոտորի հրա-
	ՂԶ	ԺԴ	Թ	մանաւ Դեմիտանոսի, զի մի
	ՂԷ	ԺԵ	Ժ	պա[յ]ազատ ոք Թագաւորու-
	ՂԸ	ԺԶ	ԺԱ	թեանն հրէից Ման[ա]ցէ յերու-
	ՂԹ	ԺԷ	ԺԲ	սաղէմ։[12]
		oo		
—Ներաւուա Թագ[աւորէ] ամս	Ճ	Ա	ԺԴ	
Բ(2)։ սա վճարի Սաղուստ։[13]	ՃԱ	Բ	ԺԴ	
		oo		
—Տրաիանոս Թագ[աւորէ] ամս	ՃԲ	Ա	ԺԵ	
Ի (20)։ սա վճարի Սաղուստ։	ՃԴ	Բ	ԺԶ	
	ՃԴ	Դ	ԺԷ	
	ՃԵ	Դ	ԺԸ	
—Յովաննէս արձակի ի Պատմիոս	ՃԶ	Ե	ԺԹ	
կղզոյ։	ՃԷ	Զ	Ի	

	ՃԸ	Է	ԻԱ	
	ՃԹ	Ը	ԻԲ	
—Աւետարանիչն հանդեաւ Յեփեսոս։	ՃԺ	Թ	ԻԳ	—Յուստոս եպիսկոպոս։
	ՃԺԱ	Ժ	ԻԴ	
	ՃԺԲ	ԺԱ	ԻԵ	
	ՃԺԳ	ԺԲ	ԻԶ	
	ՃԺԴ	ԺԳ	ԻԷ	
	ՃԺԵ	ԺԴ	ԻԸ	
	ՃԺԶ	ԺԵ	ԻԹ	
	ՃԺԷ	ԺԶ	Լ	
	ՃԺԸ	ԺԷ	ԼԱ	
	ՃԺԹ	ԺԸ	ԼԲ	
	ՃԻ	ԺԹ	ԼԳ	
	ՃԻԱ	Ի	ԼԴ	—Սատոն Եղիսս Բասիլիդէ և Կարպոկրատեայ հերձուած։
		ՕՕ		
—Ադրիանոս Թագ[աւորէ] ամս ԻԱ (21). սա ջրդողել ի Թանչաւ։[14]	ՃԻԲ	Ա	ԼԵ	
	ՃԻԳ	Բ	ԼԶ	
	ՃԻԴ	Գ	ԼԷ	
	ՃԻԵ	Դ	ԼԸ	
	ՃԻԶ	Ե	ԼԹ	
—Մրիր փիլիսոփոս և կոտրաղոս արարին տոմար Զատկի։	ՃԻԷ	Զ	Խ	
	ՃԻԸ	Է	ԽԱ	
			ՕՕ	
	ՃԻԹ	Ը	Ա	—Տիրան Թագ[աւորէ] ամս ԻԱ (21)։
—Յերուսաղէմ եպիսկոպոսք ի Թլփատութիւնն ԺԶ (16)։[15]	ՃԼ	Թ	Բ	
	ՃԼԱ	Ժ	Գ	—Վաղարշակ Դ (4) ամ։
	ՃԼԲ	ԺԱ	Դ	
	ՃԼԳ	ԺԲ	Ե	—Ակիւղաս Թարգմանիչ եղև. սա էր պոնտացի։
	ՃԼԴ	ԺԳ	Զ	
—Եվ հրաման ի կայսերէ չմԸտանել Հրէ ի Յերուսաղէմ։	ՃԼԵ	ԺԴ	Է	
	ՃԼԶ	ԺԵ	Ը	
	ՃԼԷ	ԺԶ	Թ	
	ՃԼԸ	ԺԷ	Ժ	

	ՃԼԹ	ԺԸ	ԺԱ	
	ՃԽ	ԺԹ	ԺԲ	
	ՃԽԱ	Ի	ԺԳ	
	ՃԽԲ	ԻԱ	ԺԴ	
		ՕՕ		
—Տիտոս Անտոնինոս Թագ[աւորէ] ամս ԻԴ (23)։	ՃԽԳ	Ա	ԺԵ	—Վաղինաիոնոսի և Մարկիոնի Պոնտացոյ հերձ[ուած]։
	ՃԽԴ	Բ	ԺԶ	
	ՃԽԵ	Գ	ԺԷ	
	ՃԽԶ	Դ	ԺԸ	—Սիմաքոս Թարգմանիչ Գ (3) գիրս մեկնեաց։
	ՃԽԷ	Ե	ԺԹ	
	ՃԽԸ	Զ	Ի	
	ՃԽԹ	Է	ԻԱ	
			ՕՕ	
	ՃԾ	Ը	Ա	—Տիգրան Թագ[աւորէ] ամս ԻԱ (21)։
	ՃԾԱ	Թ	Բ	
	ՃԾԲ	Ժ	Գ	—Ջամասպ ամս Ժ (10)։
	ՃԾԳ	ԺԱ	Դ	
	ՃԾԴ	ԺԲ	Ե	
	ՃԾԵ	ԺԳ	Զ	—Միւս Իսահակիդա հերձուա[ծ]։
	ՃԾԶ	ԺԴ	Է	
	ՃԾԷ	ԺԵ	Ը	
	ՃԾԸ	ԺԶ	Թ	
	ՃԾԹ	ԺԷ	Ժ	
	ՃԿ	ԺԸ	ԺԱ	
	ՃԿԱ	ԺԹ	ԺԲ	
	ՃԿԲ	Ի	ԺԳ	
	ՃԿԳ	ԻԱ	ԺԴ	
	ՃԿԴ	ԻԲ	ԺԵ	
	ՃԿԵ	ԻԳ	ԺԶ	
		ՕՕ		
—Մարկոս, Սիբելիոս, Անտոնինոս, որ և Բերոս, Ղուկոս ԺԹ (19)։[16]	ՃԿԶ	Ա	ԺԷ	
	ՃԿԷ	Բ	ԺԸ	—Կրետացոց հերձուածն, որ պատճառս Տրաիանոս եղև։
	ՃԿԸ	Գ	ԺԹ	
	ՃԿԹ	Դ	Ի	
	ՃՀ	Ե	ԻԱ	
			ՕՕ	
	ՃՀԱ	Զ	Ա	—Արշակ Թագ[աւորէ] ամս ԻԲ (22)։
	ՃՀԲ	Է	Բ	
	ՃՀԳ	Ը	Գ	—Ապողինարի հերձ[ուած]։
	ՃՀԴ	Թ	Դ	
	ՃՀԵ	Ժ	Ե	—Դիոնիսիոս եպիսկոպոս Կորնթաց[ւ]ոց։
	ՃՀԶ	ԺԱ	Զ	

	ՃԷԷ	ԺԲ	Է	
	ՃԷԸ	ԺԴ	Ը	
	ՃԷԹ	ԺԴ	Թ	
	ՃՋ	ԺԵ	Ժ	
	ՃՋԱ	ԺԶ	ԺԱ	
	ՃՋԲ	ԺԷ	ԺԲ	—Երիանոս եպիս[կոպոս] Ղոդ-
	ՃՋԳ	ԺԸ	ԺԳ	նիայ Գայելիա ղՋաաիկն ի միա-
	ՃՋԴ	ԺԹ	ԺԴ	շարաթին անշարժ պահեաց։
		oo		
	ՃՋԵ	Ա	ԺԵ	—Կոմոդոս Թագ[աւորէ] ամս
	ՃՋԶ	Բ	ԺԶ	ԺԱ (11)։ սա Թագեցաւ ի Վի-
	ՃՋԷ	Դ	ԺԷ	ենաղնն բուրաստանն։[17]
—Թեոդոսի հերձուածոյն Մար-	ՃՋԸ	Դ	ԺԸ	
կիոն ի Դ (4) գիրս թարգման-	ՃՋԹ	Ե	ԺԹ	
եաց]։	ՃՂ	Զ	Ի	
	ՃՂԱ	Է	ԻԱ	—Կաւատ Պէրոզ ԻԴ (23)։
	ՃՂԲ	Ը	ԻԲ	
			oo	
	ՃՂԴ	Թ	Ա	—Վաղարշակ Թագ[աւորէ] ամս
	ՃՂԴ	Ժ	Բ	ԻԲ (22)։
	ՃՂԵ	ԺԱ	Դ	—Մահն Արաւանա որդոյ Վա-
		oo		ղարշոյ յԱրտաշրէ որդոյ Սասա-
—Նդիոս Թագաւ[որէ] ամս	ՃՂԶ	Ա	Դ	նաւ։
Բ (2)։	ՃՂԷ	Բ	Ե	
		oo		
—Սեսերիոս Թագ[աւորէ] ամս	ՃՂԸ	Ա	Զ	
ԺԸ (18)։ սա յարոյց հալածանս։	ՃՂԹ	Բ	Է	
	Մ	Դ	Ը	
—Ի սորայ աւուրս հինգերորդ	ՄԱ	Դ	Թ	
թարգմանութիւնն դաւաւ ի կա-	ՄԲ	Ե	Ժ	
բասի թաքուցեալ։	ՄԳ	Զ	ԺԱ	
	ՄԴ	Է	ԺԲ	
	ՄԵ	Ը	ԺԴ	
	ՄԶ	Թ	ԺԴ	—Ղեւոնդէս, հայրն Որոդենի
	ՄԷ	Ժ	ԺԵ	մարտիրոսացաւ։
	ՄԸ	ԺԱ	ԺԶ	—Որեգենէս յԱղէկսանդր յամա-
	ՄԹ	ԺԲ	ԺԷ	տոզ հասակի էր։
	ՄԺ	ԺԳ	ԺԸ	
	ՄԺԱ	ԺԴ	ԺԹ	
	ՄԺԲ	ԺԵ	Ի	
			oo	
	ՄԺԴ	ԺԶ	Ա	—Խոսրով Թագ[աւորէ] ամս
	ՄԺԴ	ԺԷ	Բ	ԽԸ (48)։
	ՄԺԵ	ԺԸ	Դ	
		oo		

—Անտոնինոս թագ[աւորէ] ամս Ը (8)։	ՄԺԶ	Ա	Գ	—Խոսրով կաւատա Պերոզ ԽԸ (48)։ Ի սորա աւուրս վեցերբորդ թարգմանութիւնն գտաւ ի կարասի թաղեալ։
	ՄԺԷ	Բ	Ե	
	ՄԺԸ	Գ	Զ	
—Թուականն Հոռոմի ՇԼԲ (332) էր։	ՄԺԹ	Գ	Է	
	ՄԻ	Ե	Ը	Իսկ հայս ՄԻԸ (228)։
—Նարկիսոս եպիսկոպոս զՋուրն ի ձեթ վոխեց։	ՄԻԱ	Զ	Թ	
	ՄԻԲ	Է	Ժ	
	ՄԻԳ	Ը՝	ԺԱ	
		ՀՀ		
—Մակարիոս թագ[աւորէ] ամ Ա (1)։ Անատոնէս թագ[աւորէ] ամս Գ (4)։	ՄԻԳ	Ա	ԺԲ	—Ափրիկանոս ժամանակագիր։
		ՀՀ		
	ՄԻԵ	Ա	ԺԳ	
	ՄԻԶ	Բ	ԺԴ	
	ՄԻԷ	Գ	ԺԵ	
	ՄԻԸ	Դ	ԺԶ	
		ՀՀ		
—Աղեկսանդրոս թագ[աւորէ] ամս ԺԴ (13)։	ՄԻԹ	Ա	ԺԷ	
	ՄԼ	Բ	ԺԸ	
	ՄԼԱ	Գ	ԺԹ	
—Խիրոդիասայ Բոսբորաց ի խաւսո գնէ վասն Զատկաց, վասն Ժ (10) ժամանակեա կանոնի, և երդս երգոց և սակաւ մի Եզեկիելէ և վասն Նեռինն։	ՄԼԲ	Գ	Ի	
	ՄԼԳ	Ե	ԻԱ	
	ՄԼԴ	Զ	ԻԲ	
	ՄԼԵ	Է	ԻԳ	
	ՄԼԶ	Ը	ԻԴ	—Որոգինէս ի գպրոցի լինի։[18]
	ՄԼԷ	Թ	ԻԵ	
	ՄԼԸ	Ժ	ԻԶ	
	ՄԼԹ	ԺԱ	ԻԷ	
	ՄԽ	ԺԲ	ԻԸ	
	Մ[Խ]Ա	ԺԳ	ԻԹ	
		ՀՀ		
—Մաքսիմանոս թագ[աւորէ] ամս Գ (3)։	ՄԽԲ	Ա	Լ	—Որոգենէս գնաց յԱղեկսանդրէէ ի Կեսարիա հրահանգաւ։[19]
	ՄԽԳ	Բ	ԼԱ	
	ՄԽԴ	Գ	ԼԲ	
		ՀՀ		
—Գորդիանոս թագ[աւորէ] ամս Զ (6)։	ՄԽԵ	Ա	ԼԳ	
	ՄԽԶ	Բ	ԼԴ	
	ՄԽԷ	Գ	ԼԵ	
	ՄԽԸ	Դ	ԼԶ	
	ՄԽԹ	Ե	ԼԷ	
	ՄԾ	Զ	ԼԸ	
		ՀՀ		
—Փիլիպոս թագ[աւորէ] ամս Է (7)։	ՄԾԱ	Ա	ԼԹ	—Ի Հռոմա շինելոյն ասա Ռ(1000) ամ լցաւ։[20]
	ՄԾԲ	Բ	Խ	
	ՄԾԳ	Գ	ԽԱ	
	ՄԾԴ	Դ	ԽԲ	
	ՄԾԵ	Ե	ԽԳ	

	ՄԾԶ	Զ	ԽԴ	
	ՄԾԷ	Է	Խե	
		ՕՕ		
—Դիկոս ամ Ա (1)։	ՄԾԸ	Ա	ԽԶ	—Մանկունք յՈՒքդոս [ՀԴ]ՆՀՒ։
		ՕՕ		
—Գաղով վաղէս ժե (15)։	ՄԾԹ	Ա	Խէ	
	Մկ	Բ	ԽԸ	—Ժողովն ի Հոռմ կ (60) եպիս-կոպոսաց։
			ՕՕ	
—Գալն Անակա ի Հայս։	ՄկԱ	Գ	Ա	
	ՄկԲ	Դ	Բ	—Անիշլան ՅԱալ Հա[յ]ոց ամս Իե (25)։
	ՄկԳ	ե	Գ	
—Պողոս Սամոսացի յԱնդիհոդ եպիսկոպ[ոս] հերձուածող։	ՄկԴ	Զ	Դ	—Որմիսդ Խոսրով ԺԲ (12)։
	Մկե	Է	ե	—Գրիգոր սքանչելագործ աշա-կերա Որոդինի։
	ՄկԶ	Ը	Զ	
			Է	
—Դիոնիսիոս Հոռմա հայրապետն հերքող եղև Սամոսացոյն։	ՄկԸ	Ժ	Ը	—Նաւասիոս հերձուածող. ասա է կ (60)-իցն ժողովն։
	ՄկԹ	ԺԱ	Թ	
	Մէ	ԺԲ	Ժ	
	ՄէԱ	ԺԳ	ԺԱ	
	ՄէԲ	ԺԴ	ԺԲ	
	ՄէԳ	Ժե	ԺԳ	
		ՕՕ		
—Կղաւդիոս Թագ[աւորէ] ամս Բ (2)։	ՄէԴ	Ա	ԺԴ	—Ժողովն Անախոքա, վասն Պո-ղոսի Սամոսացոյ, որ զԱբ-ահամոնին նորոգէր։
	Մէե	Բ	Ժե	
			ՕՕ	
—Աւրեղիոս Թագ[աւորէ] ամս ե (5)։	ՄէԶ	Ա	ԺԶ	
	ՄէԷ	Բ	ԺԷ	
	ՄէԸ	Դ	ԺԸ	
	ՄէԹ	Դ	ԺԹ	
	ՄԶ	ե	Ի	
		ՕՕ		
—Տաքիաոս Թագ[աւորէ] Ա(1)։	ՄԶԱ	Ա	ԻԱ	
		ՕՕ		
—Պրաւրոս Թագաւորէ ամ[ս] Զ (6)	ՄԶԲ	Ա	ԻԲ	—Արաաւաստ Մանդակունի և Լիկիանէս կոմս, սնուցիչք Տրդա-տա, ածեն ի կայսր։ Ասա է Մա-նիքեացոց հերձվ[ած]։
	ՄԶԴ	Բ	ԻԳ	
	ՄԶԴ	Գ	ԻԴ	
	ՄԶե	Դ	Իե	
	ՄԶԶ	ե	ԻԶ	
	ՄԶԷ	Զ	ԻԷ	
		ՕՕ		
—Կարոս Թագ[աւորէ] ամս Բ(2)։	ՄԶԸ	Ա	ԻԸ	
	ՄԶԹ	Բ	ԻԹ	—Անատոդի Աղեկսանդրոցն դչա-փս և զԹ[ի]ւս համար[ողութեան]։
		ՕՕ	ՕՕ	
—Դիոկղիտիանոս Թագ[աւորէ] ամս ԺԸ (18)։	ՄՂ	Ա	Ա	
	ՄՂԱ	Բ	Բ	—Խոսրով | | | դա ԼԶ(36) | | |
—Տրդատ յառաջին ամին էտ նուերս Անախտա կապուտակ երինջ ի դեղն Երիզաւ։[31]	ՄՂԲ	Դ	Դ	
	ՄՂԴ	Դ	Դ	
	ՄՂԴ	ե	ե	
	ՄՂե	Զ	Զ	
	ՄՂԶ	Է	Է	

a

	ՄՂԷ	Ը	Ը		—Եպիսկոպոսք վկաեցին ԾԶ (սե)
	ՄՂԸ	Թ	Թ		ընդ որս և Պետրոս Աղեկսանդ-
	ՄՂԹ	Ժ	Ժ		բացին։
	Ց	ԺԱ	ԺԱ		
	ՑԱ	ԺԲ	ԺԲ		—Նլանէ սու[ր]բն Հռովսիմէ ի
	ՑԲ	ԺԳ	ԺԴ		Հայք ՀԼ (78) ընգերբա[ւք]։
	ՑԳ	ԺԴ	ԺԴ		
—Նյն ի Վիրապէն։	ՑԴ	ԺԵ	ԺԵ		
	ՑԵ	ԺԶ	ԺԶ	Ա	—Տրդատ պատուհասի ի Ցաս-
	ՑԶ	ԺԷ	ԺԷ	Բ	տուծոյ։Սուրբ Գրիգոր ամս Լ(30)։
	ՑԷ	ԺԸ	ԺԸ	Դ	
		oo			
—Կոստանդիանոս ամս ԼԴ (34)։	ՑԸ	Ա	ԺԹ	Դ	
	ՑԹ	Բ	Ի	Լե	
	ՑԺ	Գ	ԻԱ	Զ	
	ՑԺԱ	Դ	ԻԲ	Է	
	ՑԺԲ	Ե	ԻԳ	Ը	
	ՑԺԳ	Զ	ԻԴ	Թ	
	ՑԺԴ	Է	ԻԵ	Ժ	
	ՑԺԵ	Ը	ԻԶ	ԺԱ	
	ՑԺԶ	Թ	ԻԷ	ԺԲ	—Աստանուր դադարումն հալա-
	ՑԺԷ	Ժ	ԻԸ	ԺԳ	ծանաց։
—Գիւտ սուրբ խաչին ի ձեռն Հեղինեայ։	ՑԺԸ	ԺԱ	ԻԹ	ԺԴ	
	ՑԺԹ	ԺԲ	Լ	ԺԵ	
	ՑԻ	ԺԳ	ԼԱ	ԺԶ	
	ՑԻԱ	ԺԴ	ԼԲ	ԺԷ	
	ՑԻԲ	ԺԵ	ԼԳ	ԺԸ	—Արիոսի հերձված։
	ՑԻԳ	ԺԶ	ԼԴ	ԺԹ	
	ՑԻԴ	ԺԷ	ԼԵ	Ի	
	ՑԻԵ	ԺԸ	ԼԶ	ԻԱ	
	ՑԻԶ	ԺԹ	ԼԷ	ԻԲ	
	ՑԻԷ	Ի	ԼԸ	ԻԳ	
	ՑԻԸ	ԻԱ	ԼԹ	ԻԴ	
	ՑԻԹ	ԻԲ	Խ	ԻԵ	
—Ասա է սուրբ ժողովն Նիկ[եա] ՑԺԸ (318)-ի՛ցն։	ՑԼ	ԻԴ	ԽԱ	ԻԶ	
	ՑԼԱ	ԻԴ	ԽԲ	ԻԷ	
	ՑԼԲ	ԻԵ	ԽԳ	ԻԸ	
	ՑԼԳ	ԻԶ	ԽԴ	ԻԹ	
	ՑԼԴ	ԻԷ	ԽԵ	Լ	
				oo	
	ՑԼԵ	ԻԸ	ԽԶ	Ա	—Տէր Ռստակէս ամս Է (Է)։

	ՑԼԶ	ԻԹ	ԽԷ	Բ	
	ՑԼԷ	Լ	ԽԸ	Դ	
	ՑԼԸ	ԼԱ	ԽԹ	Դ	
	ՑԼԹ	ԼԲ	Ծ	Ե	
	ՑԽ	ԼԳ	ԾԱ	Զ	
	ՑԽԱ	ԼԴ	ԾԲ	Է	
		oo		oo	
—Կոստանդին Թագ[աւորէ] ամս ԻԴ (23)։	ՑԽԲ	Ա	ԾԴ	Ա	—Տէր Վրթանէս ամս ԺԵ (15). որդիք սորա Գոիգորիս և Ցուսիկ։
	ՑԽԳ	Բ	ԾԴ	Բ	
	ՑԽԴ	Գ	ԾԵ	Դ	
—Սա դարձոյց զԱրիոն ի տեղի իւր։	ՑԽԵ	Դ	ԾԶ	Դ	
			oo		
	ՑԽԶ	Ե	Ա	Ե	—Փոքր Խոսրով Թագաւորէ ամս Թ (9)։
	ՑԽԷ	Զ	Բ	Զ	
	ՑԽԸ	Է	Գ	Է	—Կաւաաա Արտաշիր Խոսրովեան Ա (1)։
	ՑԽԹ	Ը	Դ	Ը	
	ՑԾ	Թ	Ե	Թ	
	ՑԾԱ	Ժ	Զ	Ժ	
	ՑԾԲ	ԺԱ	Է	ԺԱ	
—Երևումն սուրբ խաչին յերուսաղէմ։	ՑԾԳ	ԺԲ	Ը	ԺԲ	
	ՑԾԴ	ԺԳ	Թ	ԺԳ	
			oo		
	ՑԾԵ	ԺԴ	Ա	ԺԴ	—Տիրան Թա[գաւորէ] ամս ԺԶ (16)։
	ՑԾԶ	ԺԵ	Բ	ԺԵ	
				oo	
—Ի սա դրեաց Կիւրեղ զԹուղթն։	ՑԾԷ	ԺԶ	Դ	Ա	—Տէր Ցուսիկ ամ Զ (6). որդիք սորա՝ Պապ, Աթանագինն։
	ՑԾԸ	ԺԷ	Դ	Բ	
	ՑԾԹ	ԺԸ	Ե	Գ	
	ՑԿ	ԺԹ	Զ	Դ	
—Անդրիաս յաւրինեաց տումարս։	ՑԿԱ	Ի	Է	Ե	
	ՑԿԲ	ԻԱ	Ը	Զ	
				oo	
	ՑԿԴ	ԻԲ	Թ	Ա	—Տէր Փառներսեհ ի Տարաւնոյ յԱսալչատէ Դ (4)։
	ՑԿԴ	ԻԳ	. Ժ	Բ	
		oo			
—Ցղիանոս Թա[գաւորէ] ամ Ա (1)։	ՑԿԵ	Ա	ԺԱ	Դ	
		oo			
- Ցորիանոս Թա[գաւորէ] ամ Ա (1)։	ՑԿԶ	Ա	ԺԲ	Դ	
		oo		oo	
-Վաղէս Թա[գաւորէ] ԺԱ (11)	ՑԿԷ	Ա	ԺԴ	Ա	—Զկիւրեղ սպան Ցուղիանոս։ զայս ամս լռեաց կաթողիկոսք։
	ՑԿԸ	Բ	ԺԴ	Բ	
	ՑԿԹ	Դ	ԺԵ	Դ	
				oo	
	ՑՀ	Դ	ԺԶ	Ա	—Տէր Ներսէս ամս ԼԴ (34). որդի Աթանագինի։ Արշակ ամս Ը (8)։
			oo		
—Վաղէս աքսորէ զՆերսէս յՈվկիանոս ՀԲ (72) եպիսկոպոսաւք ամս Թ (9)։	ՑՀԱ	. Ե	Ա	Բ	
	ՑՀԲ	Զ	Բ	Դ	
	ՑՀԴ	Է	Դ	Դ	-Ցաղկեբա Թոռն Խոսրով Զ (6)։
	ՑՀԴ	Ը	Դ	Ե	
	ՑՀԵ	Թ	Ե	Զ	

	ՑՀԶ	Ժ	Զ	Է	
—Վախճանն Աթանասի Ա-	ՑՀԷ	ԺԱ	Է	Ը	—Բարսեղ, Գրիգոր Աստուածա-
ղէկսանդրացոյ։ Գրաաիա-		oo			բան սուրբ վարդապետք։
նոս ամս Ե (5)։	ՑՀԸ	Ա	Ը	Թ	
	ՑՀԹ	Բ	Թ	Ժ	
—Ցառաջ քան դԹէոդոս	ՑՁ	Դ	Ժ	ԺԱ	—Եպիփան Զ (80) աղանդ յայա-
եղեն ժողովք Զ (6)։	ՑՁԱ	Դ	ԺԱ	ԺԲ	նեաց և Ե (5) դիրս գրեց։
	ՑՁԲ	Ե	ԺԲ	ԺԴ	
		oo			
—Թէոդոս մեծ թաղ[աւորէ]	ՑՁԳ	Ա	ԺԴ	ԺԴ	
ամս ԺԵ (15)։	ՑՁԴ	Բ	ԺԴ	ԺԵ	—Սա դարձոյց դՆեբսէս։
—Ժողովն ՃԾ (150)։[22]	ՑՁԵ	Դ	ԺԵ	ԺԶ	
—Ցարեան մանկունքն։	ՑՁԶ	Դ	ԺԶ	ԺԷ	—Ն[է]սաորի հերձուածն։
	ՑՁԷ	Ե	ԺԷ	ԺԸ	
—Կիւրեղ Աղէկսանդրի է-	ՑՁԸ	Զ	ԺԸ	ԺԹ	—Դիմոփիլոս եպիսկոպոս Կոս-
պիսկոպոս։	ՑՁԹ	Է	ԺԹ	Ի	ատանդնուպալսի մերժի և Աս-
	ՑՂ	Ը	Ի	ԻԱ	տուածաբան առնու և յետոյ Նեկ-
	ՑՂԱ	Թ	ԻԱ	ԻԲ	տարիոս, ապա Յոհան Ոսկեբե-
	ՑՂԲ	Ժ	ԻԲ	ԻԴ	ան։
	ՑՂԳ	ԺԱ	ԻԴ	ԻԴ	
	ՑՂԴ	ԺԲ	ԻԴ	ԻԵ	
	ՑՂԵ	ԺԴ	ԻԵ	ԻԶ	
	ՑՂԶ	ԺԴ	ԻԶ	ԻԷ	
	ՑՂԷ	ԺԵ	ԻԷ	ԻԸ	
		oo			
—Արկադէս և Ունորէս ամս	ՑՂԸ	Ա	ԻԸ	ԻԹ	
ԻԴ (24)։	ՑՂԹ	Բ	ԻԹ	Լ	
	Ն	Դ	Լ	ԼԱ	
			oo		
—Եւթաղ ղղիրսն Գ[օ]գ[ոս]	ՆԱ	Դ	Ա	ԼԲ	—Գապ թա|դաւորէ] է (7) ամ։
և զԿաթ|ողիկեայս]	ՆԲ	Ե	Բ	ԼԴ	
ղԴո[րթս] առաք[ելոց]	ՆԴ	Զ	Դ	ԼԴ	
կնքեաց, վասն Կաղորբոսի				oo	
և Կարպոկրատէ։	ՆԴ	Է	Դ	Ա	—Տէր Շահակ ի Մանձկերտոյ
	ՆԵ	Ը	Ե	Բ	ամ Զ (6)։
	ՆԶ	Թ	Զ	Գ	
	ՆԷ	Ժ	Է	Դ	
			oo		
	ՆԸ	ԺԱ	Ա	Ե	—Վարազդատ թա[դաւորէ] Ե
—Շահակ ի Գապա առնու	ՆԹ	ԺԲ	Բ	Զ	(5)։
զաթոռն։				oo	
	ՆԺ	ԺԳ	Դ	Ա	—Տէր Գ (3)։[23]
	ՆԺԱ	ԺԴ	Դ	Բ	—Մահմետ Ի (20) ամ։
	ՆԺԲ	ԺԵ	Ե	Գ	
			oo	oo	
—Խոսրով թա[դաւորէ]	ՆԺԳ	ԺԶ	Ա	Ա	—Տէր Ասպուրակէս Ե (5), լինի
Հայոց Դ (4) ամ։	ՆԺԴ	ԺԷ	Բ	Բ	դաւակէ Աղբիանոսի, Հարքա-
	ՆԺԵ	ԺԸ	Դ	Դ	եպիսկոպոսի։

	ՆԺԶ	ԺԹ	Դ	Դ	—Մաւիր ԻԲ (22), Արշակ, Վաղարշակ Ե (5). Ապուրքը, Աւթման, Ամրան ԼԲ (32)։
			oo		
—Վռամշապուհ ԺԷ (17). Դիլիտ Դ (4)։	ՆԺԷ	Ի	Ա	Ե	
				oo	
	ՆԺԸ	ԻԱ	Բ	Ա	
	ՆԺԹ	ԻԲ	Դ	Բ	—Տէր Սահակ ԽԲ (42), որդի Ներսիսի։ Աստանաւոր դպրութիւն Ի Հայ փոխէր։
	ՆԻ	ԻԴ	Դ	Դ	
	ՆԻԱ	ԻԴ	Ե	Դ	
		oo			
—Թեոդոս փոքր[ը] սամ ԻԷ (27)։	ՆԻԲ	Ա	Զ	Ե	
	ՆԻԴ	Բ	Է	Զ	
	ՆԻԴ	Դ	Ը	Է	
	ՆԻԵ	Դ	Թ	Ը	
	ՆԻԶ	Ե	Ժ	Թ	—Եղնիկ և Յուսեփ աշակերտք Սահակայ։
	ՆԻԷ	Զ	ԺԱ	Ժ	
	ՆԻԸ	Է	ԺԲ	ԺԱ	
	ՆԻԹ	Ը	ԺԴ	ԺԲ	
	ՆԼ	Թ	ԺԴ	ԺԴ	
—Մասրոբ Է (7) դիր յաւելեաց և շինեցաւ դպրութիւնն։	ՆԼԱ	Ժ	ԺԵ	ԺԴ	
	ՆԼԲ	ԺԱ	ԺԶ	ԺԵ	—Ժողովն Եփեսոսի Մ (200)-ից։
	ՆԼԳ	ԺԲ	ԺԷ	ԺԶ	
	ՆԼԴ	ԺԴ	ԺԸ	ԺԷ	
	ՆԼԵ	ԺԴ	ԺԹ	ԺԸ	
	ՆԼԶ	ԺԵ	Ի	ԺԹ	
	ՆԼԷ	ԺԶ	ԻԱ	Ի	—Անիշխան։
	ՆԼԸ	ԺԷ		ԻԱ	—Ապրիմեր ԻԱ (21), Աքոռիր Զ (6), Վլիա Թ (9), Սուլիման Բ (2)։
	ՆԼԹ	ԺԸ		ԻԲ	
	ՆԽ	ԺԹ		ԻԳ	
	ՆԽԱ	Ի		ԻԴ	
	ՆԽԲ	ԻԱ		ԻԵ	
	ՆԽԳ	ԻԲ		ԻԶ	
	ՆԽԴ	ԻԴ		ԻԷ	
	ՆԽԵ	ԻԴ		ԻԸ	
	ՆԽԶ	ԻԵ		ԻԹ	
	ՆԽԷ	ԻԶ		Լ	
—Մարկիանոս սամ Է (7)։	ՆԽԸ	ԻԷ		ԼԱ	
		oo		oo	
	ՆԽԹ	Ա			
—Ասա է ժողովն Քաղկեդոնի և կասարուն սբրոցն Վարդանանց։[24]	ՆԾ	Բ			
	ՆԾԱ	Դ			
	ՆԾԲ	Դ			
	ՆԾԳ	Ե			
	ՆԾԴ	Զ			
	ՆԾԵ	Է			
		oo			
—Ղևոն մեծ սամ ԺԹ (19)։	ՆԾԶ	Ա			
	ՆԾԷ	Բ			
	ՆԾԸ	Դ			

a

	ՆԾԹ	Դ	Ա	—Սուրմակ Ցարձկեոյ, Փքրիշոյ Շմաել է (7)։
	ՆԿ	Ե	Բ	
	ՆԿԱ	Զ	Գ	
	ՆԿԲ	Է	Դ	
	ՆԿԳ	Ը	Ե	
	ՆԿԴ	Թ	Զ	
	ՆԿԵ	Ժ	Է	—Տէր Գիւտ Ցաւթմսու զեղջ[է] ժէ (17)։
			ՈՈ	
	ՆԿԶ	ԺԱ	Ա	
	ՆԿԷ	ԺԲ	Բ	
	ՆԿԸ	ԺԳ	Գ	
	ՆԿԹ	ԺԴ	Դ	
	ՆՀ	ԺԵ	Ե	
	ՆՀԱ	ԺԶ	Զ	
	ՆՀԲ	ԺԷ	Է	
	ՆՀԳ	ԺԸ	Ը	—Աւիտոր՝ Ղևոն թագաւոր
—Մովսէս Խորենացի փիլիսոփա և մատենագիր։	ՆՀԴ	ԺԹ	Թ	Դ (8)։
		ՈՈ		
	ՆՀԵ	Ա	Ժ	
	ՆՀԶ	Բ	ԺԱ	
—Բարսիղեոս թա[դաւորէ] Դ (3)։	ՆՀԷ	Դ	ԺԲ	
		ՈՈ		
	ՆՀԸ	Ա	ԺԴ	
	ՆՀԹ	Բ	ԺԴ	
—Զենոն թա[դաւորէ] բարեպաշտ ԺԸ (18)։	ՆԶ	Դ	ԺԵ	
		ՈՈ		
	ՆԶԱ	Ա	ԺԶ	
	ՆԶԲ	Բ	ԺԷ	
	ՆԶԴ	Դ	ՈՈ	
	ՆԶԴ	Դ	Ա	—Տէր Յոհան Մանդակոնի Զ (6)։
	ՆԶԵ	Ե	Բ	
	ՆԶԶ	Զ	Դ	
	ՆԶԷ	Է	Դ	
	ՆԶԸ	Ը	Ե	
	ՆԶԹ	Թ	Զ	—Տէր Բարգէն Յոթմսոյ զեղջէ Թ (9)։
			ՈՈ	
	ՆՂ	Ժ	Ա	
	ՆՂԱ	ԺԱ	Բ	
	ՆՂԲ	ԺԲ	Գ	
	ՆՂԳ	ԺԳ	Դ	
	ՆՂԴ	ԺԴ	Ե	
	ՆՂԵ	ԺԵ	Զ	
	ՆՂԶ	ԺԶ	Է	
	ՆՂԷ	ԺԷ	Ը	
—[Անա]սաս բա[բեպաշտ] թա-[դաւորէ]	ՆՂԸ	ԺԸ	Թ	—Տէր Սամուէլ Ցարծկեոյ ամս Ժ (10)։
		ՈՈ	ՈՈ	
	ՆՂԹ	Ա	Ա	
	Շ	Բ	Բ	
	ՇԱ	Գ	Գ	
	ՇԲ	Դ	Դ	

	ՇԳ	ղ	ե	
	ՇԴ	ե	Զ	
	Շե	Զ	Է	
	ՇԶ	Է	Ը	
	ՇԷ	Ը	Թ	
	ՇԸ	Թ	Ժ	—Տէր Մուշեղ ի Տէկոբոյ ամս Ը (8)։
			ՕՕ	
	ՇԹ	Ժ	Ա	
	ՇԺ	ԺԱ	Բ	
	ՇԺԱ	ԺԲ	Գ	
	ՇԺԲ	ԺԳ	Դ	
	ՇԺԳ	ԺԴ	ե	
	ՇԺԴ	Ժե	Զ	
	ՇԺե	ԺԶ	Է	
	ՇԺԶ	ԺԷ	Ը	
			ՕՕ	
	ՇԺԷ	ԺԸ	Ա	—Տէր Սահակ ի Հաբքա ամս ե (5)։
	ՇԺԸ	ԺԹ	Բ	
	ՇԺԹ	Ի	Գ	
	ՇԻ	ԻԱ	Դ	
	ՇԻԱ	ԻԲ	ե	
			ՕՕ	
	ՇԻԲ	ԻԳ	Ա	—Տէր Գրիգորոր ի Տիրառճ։ Զ (6)։
	ՇԻԳ	ԻԴ	Բ	
	ՇԻԴ	Իե	Գ	
	ՇԻե	ԻԶ	Դ	
	ՇԻԶ	ԻԷ	ե	
—Ցուստիանէ ամս Թ (9)։	ՇԻԷ	ԻԸ	Զ	
		ՕՕ	ՕՕ	
	ՇԻԸ	Ա	Ա	—Տէր Ղեւոն[դ] Ցառատոյգ(3)ամ։ Առ սովաւ լինի ժողովն ի Կոս-[ա]ան[դնա]պաւլիս, որ է երբորդ ժողով։
	ՇԻԹ	Բ	Բ	
	Շլ	Գ	Գ	
			ՕՕ	
	ՇլԱ	Դ	Ա	—Տէր Ներսէս յԱշաբկաց Թ(9)։
	ՇլԲ	ե	Բ	
	ՇլԳ	Զ	Գ	
	ՇլԴ	Է	Դ	
	Շլե	Ը	ե	
	ՇլԶ	Թ	Զ	
		ՕՕ		
—Ցուստիանոս ամբարիշտ ԼԹ (39)։	ՇլԷ	Ա	Է	
	ՇլԸ	Բ	Ը	
	ՇլԹ	Գ	Թ	
			ՕՕ	
	Շե	Դ	Ա	—Տէր Յովաննէս ի Մնձվայ[3] ԺԳ (14)։
	ՇեԱ	ե	Բ	
	ՇեԲ	Զ	Գ	
	ՇեԳ	Է	Դ	
	ՇեԴ	Ը	ե	
	Շեե	Թ	Զ	

a

	ՇԽԶ	Ժ	Է	
	ՇԽԷ	ԺԱ	Ը	
	ՇԽԸ	ԺԲ	Թ	
	ՇԽԹ	ԺԳ	Ժ	
	ՇՄ	ԺԴ	ԺԱ	
	ՇՄԱ	ԺԵ	ԺԲ	
	ՇՄԲ	ԺԶ	ԺԳ	
	ՇՄԳ	ԺԷ	ԺԴ	
			ՕՕ	
	ՇՄԴ	ԺԸ	Ա	—Տէր Մովսէս Լ (30)։
	ՇՄԵ	ԺԹ	Բ	
	ՇՄԶ	Ի	Գ	
		ԻԱ	Դ	
		ԻԲ	Զ	
		ԻԳ	Է	
		ԻԴ	Ը	
		ԻԵ	Թ	
		ԻԶ	Ժ	
		ԻԷ	ԺԱ	
		ԻԸ	ԺԲ	
		ԻԹ	ԺԳ	
		Լ	ԺԴ	
		ԼԱ	ԺԵ	
		ԼԲ	ԺԶ	
		ԼԳ	ԺԷ	
	ՕՕ	ԼԴ	ԺԸ	
—ՑԱդամա ցնոբ թվականս ամք ՑՃՄԶ (6150). դարձեալ սկիզբն տրարի նոր թուականիս յԼԴ (34) ամես Ցուստիանոսի կայսեր և ՑԴ (304) էր Հռոմի թուականս։[27]	Ա	ԼԵ	ԺԹ	
	Բ	ԼԶ	Ի	
	Գ	ԼԷ	ԻԱ	
	Դ	ԼԸ	ԻԲ	
	Ե	ԼԹ	ԻԴ	
		ՕՕ		
	Զ	Ա	ԻԴ	—Ցուսաիննա ամս ԺԱ (11) թագ[աւորէ]։
	Է	Բ	ԻԵ	
	Ը	Գ	ԻԶ	
	Թ	Դ	ԻԷ	—Ժողովն իմաստասիրաց յԱղեկսանդր, որ լիմնացուցին զհինգ հարիւրեակն և էր էաս իմաստասէր ԼԶ(36) ընդ երբաւրն։
	Ժ	Ե	ԻԸ	
	ԺԱ	Զ	ԻԹ	
—Ժողովն ի Կաստանդնապալիս հայոց և Հռոմոց։	ԺԲ	Է	Լ	
	ԺԳ	Ը	ՕՕ	
	ԺԴ	Թ	Ա	
	ԺԵ	Ժ	Բ	
	ԺԶ	ԺԱ	Գ	—Տէր Աբրահամ յԱղբոթանէց ԻԳ (23)։
		ՕՕ		
—Տերդթ ամ Դ (4)[28]։	ԺԷ	Ա	Դ	
	ԺԸ	Բ	Ե	
	ԺԹ	Գ	Զ	
	Ի	Դ	Է	
		ՕՕ		
—Մաւրիկ ամ Ի (20)։	ԻԱ	Ա	Ը	
	ԻԲ	Բ	Թ	

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

	ԻԳ	Դ	ԺԱ	
	ԻԴ	Դ	ԺԱ	
	Իե	ե	ԺԲ	
	ԻԶ	Զ	ԺԴ	
	Իէ	է	ԺԴ	
	ԻԸ	Ը	Ժե	
	Իթ	թ	ԺԶ	
—Աղվանք քաղկիդոնիկ եղեն. ժողով արարին չորրորդ, զՀա-[յ]ոց վարդապետքն և նորա հաւանեցան և զՅոհան ի Տեկորա ի կարին կաթողիկոս նստուցին։	Լ	Ժ	ԺԷ	
	ԼԱ	ԺԱ	ԺԸ	
	ԼԲ	ԺԲ	ԺԹ	
	ԼԳ	ԺԳ	Ի	
	ԼԴ	ԺԴ	ԻԱ	
	Լե	Ժե	ԻԲ	
	ԼԶ	ԺԶ	ԻԳ	
			ՕՕ	
	ԼԷ	ԺԷ	Ա	—Տէր Յոհան ի Դողովտէ, ի Բազարանէ ԻԶ (26). սա ժողովեալ նղովեաց զՎիրք և զԱղուանք։
	ԼԸ	ԺԸ	Բ	
—Երկրորդ ժողով ի Կոստանդնուպաւլիս։	Խ	Ի	Դ	
			ՕՕ	
—Փաւկաս ամս Ի (Ը)։	ԽԱ	Ա	Ե	
	ԽԲ	Բ	Զ	
			ՕՕ	
—Հերակղ Թագ[աւորէ] ԼԱ (31) ամ։	ԽԳ	Ա	Է	
	ԽԴ	Բ	Ը	
	Խե	Դ	Թ	
	ԽԶ	Դ	Ժ	
	Խէ	Ե	ԺԱ	
	ԽԸ	Զ	ԺԲ	
	ԽԹ	Է	ԺԳ	
	Ծ	Ը	ԺԴ	
	ԾԱ	Թ	Ժե	
	ԾԲ	Ժ	ԺԶ	
	ԾԴ	ԺԱ	ԺԷ	
	ԾԴ	ԺԲ	ԺԸ	
	Ծե	ԺԳ	ԺԹ	
	ԾԶ	ԺԴ	Ի	
	ԾԷ	Ժե	ԻԱ	
	ԾԸ	ԺԶ	ԻԲ	
—Խոսրով Պարսիկ առաւ Արզ-[րում], Դ—որրդ Հայք, զԵրուսաղէմ և զՆիզիպտոս և զսուրբ խաչն տարաւ։[29]	ԾԹ	ԺԷ	ԻԳ	
	Կ	ԺԸ	ԻԴ	
	ԿԱ	ԺԹ	Իե	
	ԿԲ	Ի	ԻԶ	—Մահմեթ յարեաւ։
			ՕՕ	
	ԿԳ	ԻԱ	Ա	—Տէր եղբ յԱղցից Ը (8)։
	ԿԴ	ԻԲ	Բ	
	Կե	ԻԳ	Գ	
	ԿԶ	ԻԴ	Դ	
	Կէ	Իե	Ե	
—Հերակղ սպան զԽոսրո[վ] և զխաչն զարձոյց։[30]	ԿԸ	ԻԶ	Զ	— Ասա է		
	ԿԹ	Իէ	Է	

a

	Հ	ԻԸ	Ը
			ՀՀ
	ՀԱ	ԻԹ	Ա
—ՁՊՔՃԷՀ տուին Տաճկու[նք]։	ՀԲ	Լ	Բ	—Տէր Քրիստոփոր Թուն Աբրահամու Բ (2)։
			ՀՀ
	ՀԳ	ԼԱ	Ա	—Տէր Կումիտաս յԱղցից Ժ (10)։
			ՀՀ
—Կոստանդին ամս Գ (3) Թա[գաւորէ]։	ՀԴ	Ա	Բ
	ՀԵ	Բ	Գ
	ՀԶ	Դ	Դ
			ՀՀ
—Կոստանդին որդի իւր ԻԹ (20)։	ՀԷ	Ա	Ե
	ՀԸ	Բ	Զ
	ՀԹ	Գ	Է
	Զ	Դ	Ը
	ՁԱ	Ե	Թ
	ՁԲ	Զ	Ժ
			ՁՁ
	ՁԳ	Է	Ա	—Տէր Ներսէս յԻշխան դեղջէ Ի (20)։
	ՁԴ	Ը	Բ
	ՁԵ	Թ	Գ
	ՁԶ	Ժ	Դ
	ՁԷ	ԺԱ	Ե
	ՁԸ	ԺԲ	Զ
	ՁԹ	ԺԴ	Է
—Ժողովն Հռոմայ, զոր աբ[աբ] Մարտինոս Հռոմա հայրապետ ՃԾ (130) եպիսկոպոսք։	Ղ	ԺԴ	Ը
	ՂԱ	ԺԵ	Թ	—Ասա առաւ Դվին ի Տաճկաց և համար գերութեանն ԼԵԹ(35000)։
	ՂԲ	ԺԶ	Ժ
	ՂԳ	ԺԷ	ԺԱ
	ՂԴ	ԺԸ	ԺԲ
	ՂԵ	ԺԹ	ԺԳ
	ՂԶ	Ի	ԺԴ
	ՂԷ	ԻԱ	ԺԵ
	ՂԸ	ԻԲ	ԺԶ
	ՂԹ	ԻԳ	ԺԷ
	Ճ	ԻԴ	ԺԸ
	ՃԱ	ԻԵ	ԺԹ
	ՃԲ	ԻԶ	Ի
			ՃՃ
	ՃԳ	ԻԷ	Ա	—Տէր Անասաս յԱկոռոյ, որ զՍուրհան Դաւիթ մկրտեց, Զ (6)։
	ՃԴ	ԻԸ	Բ
—Կոստանդին թաղ[աւորէ] ԺԵ (15)։	ՃԵ	ԻԹ	Գ
			ՃՃ
	ՃԶ	Ա	Դ
	ՃԷ	Բ	Ե
	ՃԸ	Գ	Զ
			ՃՃ
	ՃԹ	Դ	Ա	—Տէր Իսրայէլ ի Վանանդա Ժ (10)։
	ՃԺ	Դ	Բ
	ՃԺԱ	Ե	Դ
—Զատկին խա[վարեցաւ աստ-ղա]կնե[ալ]	ՃԺԲ	Զ	Դ
	ՃԺԳ	Է	Ե
	ՃԺԴ	Ը	Զ
	ՃԺԵ	Թ	Է
	ՃԺԶ	Ժ	Ը

	ՃԺԷ	ԺԱ	Թ
	ՃԺԸ	ԺԲ	Ժ
			ՀՀ
	ՃԺԹ	ԺԴ	Ա
	ՃԻ	ԺԴ	Բ
	ՃԻԱ	ԺԵ	Դ
		ՀՀ	
	ՃԻԲ	Ա	Դ
	ՃԻԳ	Բ	Ե
	ՃԻԴ	Գ	Զ
	ՃԻԵ	Դ	Է
—Ցուսաքնա, որդի երբորդ կոսաքնդանոսի ԻԸ (28)։[32]	ՃԻԶ	Ե	Ը
	ՃԻԷ	Զ	Թ
	ՃԻԸ	Է	Ժ
	ՃԻԹ	Ը	ԺԱ
	ՃԼ	Թ	ԺԲ
	ՃԼԱ	Ժ	ԺԴ
	ՃԼԲ	ԺԱ	ԺԴ
	ՃԼԳ	ԺԲ	ԺԵ
	ՃԼԴ	ԺԳ	ԺԶ
—Դաւիթ երեք դիցուքն կայսեր ի Դվին և ժողովեցան առ Սահակ եպիսկոպոսի և զԴաւիթ Գոյլեցին։	ՃԼԵ	ԺԴ	ԺԷ
	ՃԼԶ	ԺԵ	ԺԸ
	ՃԼԷ	ԺԶ	ԺԹ
	ՃԼԸ	ԺԷ	Ի
	ՃԼԹ	ԺԸ	ԻԱ
	ՃԽ	ԺԹ	ԻԲ
	ՃԽԱ	Ի	ԻԳ
	ՃԽԲ	ԻԱ	ԻԴ
	ՃԽԳ	ԻԲ	ԻԵ
	ՃԽԴ	ԻԳ	ԻԶ
			ՀՀ
	ՃԽԵ	ԻԴ	Ա
	ՃԽԶ	ԻԵ	Բ
	ՃԽԷ	ԻԶ	Գ
	ՃԽԸ	ԻԷ	Դ
	ՃԽԹ	ԻԸ	Ե
		ՀՀ	
	ՃԾ	Ա	Զ
—Վարդան թագ[աւորէ] Դ (3)։	ՃԾԱ	Բ	Է
	ՃԾԲ	Գ	Ը
		ՀՀ	
—Ղևոն թագ[աւորէ] ԻԶ (26). առ կոտորէ զպատկերս։	ՃԾԳ	Ա	Թ
	ՃԾԴ	Բ	Ժ
	ՃԾԵ	Գ	ԺԱ
	ՃԾԶ	Դ	ԺԲ
	ՃԾԷ	Ե	ԺԳ
	ՃԾԸ	Զ	ԺԴ
			ՀՀ
	ՃԾԹ	Է	Ա
	ՃԿ	Ը	Բ
	ՃԿԱ	Թ	Գ
	ՃԿԲ	Ժ	Դ
	ՃԿԳ	ԺԱ	Ե
	ՃԿԴ	ԺԲ	Զ

—Տէր Սահակ ի Բերդկայ ԻԶ (26)։

—Տէր Յովաննէս ի Բղնունոյ ԺԴ (14)։

	ՃԿԵ	ԺԳ	Է	
	ՃԿԶ	ԺԳ	Ը	
—Խաչակոտորքն յԱրգլմեքէ։[33]	ՃԿԷ	Ժե	Թ	
	ՃԿԸ	ԺԶ	Ժ	
	ՃԿԹ	ԺԷ	ԺԱ	
	ՃՀ	ԺԸ	ԺԲ	
	ՃՀԱ	ԺԹ	ԺԳ	
—Ժողովն Մանձկերտայ, որ ղեմորն և զՋուրն ի խորհրդոյ բարձէն։[34]	ՃՀԲ	Ի	ԺԴ	
			ՕՕ	
	ՃՀԳ	ԻԱ	Ա	—Տէր Դաւիթ հայր ԺԱ (11)։
	ՃՀԴ	ԻԲ	Բ	
	ՃՀԵ	ԻԳ	Գ	
	ՃՀԶ	ԻԴ	Դ	
	ՃՀԷ	ԻԵ	Ե	
	ՃՀԸ	ԻԶ	Զ	
			ՕՕ	
—Կոստանդիք[ն] Թագ[աւորէ] ամս ԼԴ (34)։ Սուրբն Վահան[35] կատարէ։	ՃՀԹ	Ա	Է	
	ՃՁ	Բ	Ը	
	ՃՁԱ	Գ	Թ	
	ՃՁԲ	Դ	Ժ	
	ՃՁԳ	Ե	ԺԱ	
			ՕՕ	
	ՃՁԴ	Զ	Ա	—Տէր Տրդատ աղատ[36] Ի (20)։
	ՃՁԵ	Է	Բ	
	ՃՁԶ	Ը	Գ	
	ՃՁԷ	Թ	Դ	
	ՃՁԸ	Ժ	Ե	
	ՃՁԹ	ԺԱ	Զ	
	ՃՂ	ԺԲ	Է	
	ՃՂԱ	ԺԳ	Ը	
	ՃՂԲ	ԺԴ	Թ	
	ՃՂԳ	ԺԵ	Ժ	
	ՃՂԴ	ԺԶ	ԺԱ	
	ՃՂԵ	ԺԷ	ԺԲ	
	ՃՂԶ	ԺԸ	ԺԳ	
	ՃՂԷ	ԺԹ	ԺԴ	
	ՃՂԸ	Ի	ԺԵ	
	ՃՂԹ	ԻԱ	ԺԶ	
	Մ	ԻԲ	ԺԷ	
—Հերակուրքն։	ՄԱ	ԻԳ	ԺԸ	
—Ցոյնք ղԿարէն առէն։	ՄԲ	ԻԴ	ԺԹ	
	ՄԳ	ԻԵ	Ի	
			ՕՕ	
	ՄԴ	ԻԶ	Ա	—Տէր Տրդատ ամս Դ (3)։
	ՄԵ	ԻԷ	Բ	
	ՄԶ	ԻԸ	Գ	

	ՄԷ	ԻԹ	Ա	—Տէր Միոն Ա (1)։
			ՍՍ	
	ՄԸ	Լ	Ա	—Տէր Յիսայ ԺԳ (13)։
	ՄԹ	ԼԱ	Բ	
	ՄԺ	ԼԲ	Գ	
	ՄԺԱ	ԼԳ	Գ	
—Գիսաւոր առտղն եկ։	ՄԺԲ	ԼԴ	Դ	—Ղևոն Թադ[աւորէ] ամս Ը (8)։
			ՍՍ	
	ՄԺԳ	Ա	Զ	
	ՄԺԴ	Բ	Է	
	ՄԺԵ	Գ	Ը	
	ՄԺԶ	Դ	Թ	
	ՄԺԷ	Ե	Ժ	
	ՄԺԸ	Զ	ԺԱ	
	ՄԺԹ	Է	ԺԲ	
—Նիկափոր Թադ[աւորէ] Թ (9)։	ՄԻ	Ը	ԺԳ	
			ՍՍ	
	ՄԻԱ	Ա	Ա	—Տէր Ստեփանոս ի Տալ[յ]ոս. Ա (1)։
			ՍՍ	
	ՄԻԲ	Բ	Ա	—Տէր Յովաբ Ա (1)։
			ՍՍ	
	ՄԻԳ	Գ	Ա	—Տէր Սոդոմոն Ե (5)։
	ՄԻԴ	Դ	Բ	
	ՄԻԵ	Ե	Գ	
—Կոխուն Մուշ եղա[ւ][37] և մահ։	ՄԻԶ	Զ	Դ	
	ՄԻԷ	Է	Ե	
			ՍՍ	
	ՄԻԸ	Ը	Ա	—Տէր Գէորգ Գ (3)։
—Միքաէլ Ժ (10)։	ՄԻԹ	Թ	Բ	
			ՍՍ	
	ՄԼ	Ա	Գ	
			ՍՍ	
	ՄԼԱ	Բ	Ա	—Տէր Յուսէփ ի սուրբ Գրիգո-ր[ի] ԺԱ (11)։
	ՄԼԲ	Գ	Բ	
	ՄԼԳ	Դ	Գ	
	ՄԼԴ	Ե	Դ	
	ՄԼԵ	Զ	Ե	
	ՄԼԶ	Է	Զ	
	ՄԼԷ	Ը	Է	
	ՄԼԸ	Թ	Ը	
—Ղևոն Իէ (27)։	ՄԼԹ	Ժ	Թ	
			ՍՍ	
	ՄԽ	Ա	Ժ	
	ՄԽԱ	Բ	ԺԱ	
			ՍՍ	
	ՄԽԲ	Գ	Ա	—Տէր Դաւիթ ի Մոգոգա ԻԱ (21)։
	ՄԽԳ	Դ	Բ	
	ՄԽԴ	Ե	Գ	
	ՄԽԵ	Զ	Դ	
	ՄԽԶ	Է	Ե	
	ՄԽԷ	Ը	Զ	
	ՄԽԸ	Թ	Է	
	ՄԽԹ	Ժ	Ը	
	ՄՄ	Ժ	Թ	
	ՄՄԱ	ԺԱ	Ժ	
	ՄՄԲ	ԺԲ	ԺԱ	

a

	ՄԾԳ	ԺԴ	ԺԲ	
	ՄԾԴ	ԺԴ	ԺԳ	
	ՄԾԵ	ԺԵ	ԺԴ	
	ՄԾԶ	ԺԶ	ԺԵ	
	ՄԾԷ	ԺԷ	ԺԶ	
	ՄԾԸ	ԺԸ	ԺԷ	
	ՄԾԹ	ԺԹ	ԺԸ	
	ՄԿ	Ի	ԺԹ	
	ՄԿԱ	ԻԱ	Ի	
	ՄԿԲ	ԻԲ	ԻԱ	
			ՀՀ	
	ՄԿԳ	ԻԳ	Ա	—Տէր Յովհաննէս ի Կոստանդ ԺԸ (18)։
	ՄԿԴ	ԻԴ	Բ	
	ՄԿԵ	ԻԵ	Գ	
	ՄԿԶ	ԻԶ	Դ	
—Միքաէլ Թագ[աւորէ] ամս ԺԱ (11)։	ՄԿԷ	ԻԷ	Ե	
		ՀՀ		
	ՄԿԸ	Ա	Զ	
	ՄԿԹ	Բ	Է	
	ՄՀ	Գ	Ը	
	ՄՀԱ	Դ	Թ	
	ՄՀԲ	Ե	Ժ	
	ՄՀԳ	Զ	ԺԱ	
	ՄՀԴ	Է	ԺԲ	
	ՄՀԵ	Ը	ԺԳ	
	ՄՀԶ	Թ	ԺԴ	
	ՄՀԷ	Ժ	ԺԵ	
—Թեոփիլոս Թագ[աւորէ] ԺԴ (13)։	ՄՀԸ	ԺԱ	ԺԶ	
		ՀՀ		
	ՄՀԹ	Ա	ԺԷ	
	ՄՁ	Բ	ԺԸ	
			ՀՀ	
	ՄՁԱ	Գ	Ա	—Տէր Զաքարէ ի Զագա ԻԴ (24)։
	ՄՁԲ	Դ	Բ	
	ՄՁԳ	Ե	Գ	
	ՄՁԴ	Զ	Դ	
	ՄՁԵ	Է	Ե	
	ՄՁԶ	Ը	Զ	
	ՄՁԷ	Թ	Է	
	ՄՁԸ	Ժ	Ը	
	ՄՁԹ	ԺԱ	Թ	
	ՄՂ	ԺԲ	Ժ	
—Միքաէլ Թագ[աւորէ] ԻԶ (26)։	ՄՂԱ	ԺԳ	ԺԱ	
		ՀՀ		
	ՄՂԲ	Ա	ԺԲ	
	ՄՂԳ	Բ	ԺԳ	38
	ՄՂԴ	Դ	ԺԴ	

	ՄՂԵ	Գ	ԺԵ	
	ՄՂԶ	Ե	ԺԶ	
	ՄՂԷ	Զ	ԺԷ	
	ՄՂԸ	Է	ԺԸ	
	ՄՂԹ	Ը	ԺԹ	
—Եվ Բուխա ի Հայս։[39]	Ց	Թ	Ի	
—Կաճկաքարի կոիւն։[40]	ՑԱ	Ժ	ԻԱ	
	ՑԲ	ԺԱ	ԻԲ	
	ՑԳ	ԺԲ	ԻԳ	
	ՑԴ	ԺԳ	ԻԴ	
			ՕՕ	
—Կարմիր ձիւնն ի Թլաթ։	ՑԵ	ԺԴ	Ա	—Տէր Գէորգ ի Գառնոյ ամս ԻԲ (22)։
	ՑԶ	ԺԵ	Բ	
	ՑԷ	ԺԶ	Գ	
—Մահ Գրիգորի Մամիկոնեանի։[41]	ՑԸ	ԺԷ	Դ	
	ՑԹ	ԺԸ	Ե	
—Աբաս որդի Ապլապասա, եղբայր Աշոտոյ, կոտորէ զՋահար։[42]	ՑԺ	ԺԹ	Զ	
	ՑԺԱ	Ի	Է	
	ՑԺԲ	ԻԱ	Ը	
	ՑԺԳ	ԻԲ	Թ	
	ՑԺԴ	ԻԳ	Ժ	
	ՑԺԵ	ԻԴ	ԺԱ	
—Սպանին զՄիքէլ։	ՑԺԶ	ԻԵ	ԺԲ	
	ՑԺԷ	ԻԶ	ԺԳ	
		ՕՕ		
—Վասիլ Թագ[աւորէ] և ի նոյն ամի մեռաւ։ Թագաւորէ Ղևոն ամս ԻԵ (25)։[43]	ՑԺԸ	Ա	ԺԴ	
	ՑԺԹ	Բ	ԺԵ	
	ՑԻ	Գ	ԺԶ	
	ՑԻԱ	Դ	ԺԷ	
	ՑԻԲ	Ե	ԺԸ	
	ՑԻԳ	Զ	ԺԹ	
	ՑԻԴ	Է	Ի	
	ՑԻԵ	Ը	ԻԱ	
	ՑԻԶ	Թ	ԻԲ	
			ՕՕ	
	ՑԻԷ	Ժ	Ա	—Տէր Յովաննէս ամս Լ(30)։
	ՑԻԸ	ԺԱ	Բ	
	ՑԻԹ	ԺԲ	Գ	
	ՑԼ	ԺԳ	Դ	
	ՑԼԱ	ԺԴ	Ե	
	ՑԼԲ	ԺԵ	Զ	
	ՑԼԳ	ԺԶ	Է	
	ՑԼԴ	ԺԷ	Ը	
	ՑԼԵ	ԺԸ	Թ	
	ՑԼԶ	ԺԹ	Ժ	
	ՑԼԷ	Ի	ԺԱ	
	ՑԼԸ	ԻԱ	ԺԲ	
	ՑԼԹ	ԻԲ	ԺԳ	
	Ցխ	ԻԳ	ԺԴ	
	ՑխԱ	ԻԴ	ԺԵ	
	ՑխԲ	ԻԵ	ԺԶ	

a

	ՑԽԴ	ԺԷ	
	ՑԽԴ	ԺԸ	
—Խ [illegible] ակոտ [illegible] բվանն	ՑԽԵ	ԺԹ	
	ՑԽԶ	Ի	
	ՑԽԷ	ԻԱ	
—Փոդացաւուքիւն եղև։	ՑԽԸ	ԻԲ	
	ՑԽԹ	ԻԳ	
	ՑԾ	ԻԴ	
—Ո։ չոյ կոխուն։[44]	ՑԾԱ	ԻԵ	
	ՑԾԲ	ԻԶ	
	ՑԾԳ	ԻԷ	
	ՑԾԴ	ԻԸ	
	ՑԾԵ	ԻԹ	
	ՑԾԶ	Ի.	
		ՈՈ	
	ՑԾԷ	Ա	—Տէր Թէոդորոս յելոյ ԺԴ (14)։
	ՑԾԸ	Բ	
	ՑԾԹ	Գ	
	ՑԿ	Դ	
—Ակիչինն ել ի հայր։[45]	ՑԿԱ	Ե	
	ՑԿԲ	Զ	
	ՑԿԳ	Է	
	ՑԿԴ	Ը	
	ՑԿԵ	Թ	
	ՑԿԶ	Ժ	
	ՑԿԷ	ԺԱ	
	ՑԿԸ	ԺԲ	
	ՑԿԹ	ԺԳ	
	ՑՀ	ԺԴ	
		ՈՈ	
	ՑՀԱ	Ա	—Տէր Եղիսէէ Դ (4)։
	ՑՀԲ	Բ	
	ՑՀԳ	Դ	
	ՑՀԴ	Դ	
		ՈՈ	
	ՑՀԵ	Ա	—Տէր Անանէ ի Մոկաց գեղջէ,
	ՑՀԶ	Բ	որ կոչի Փաս, ԻԳ (23)։
	ՑՀԷ	Դ	
	ՑՀԸ	Դ	
—Մահն երկաթաց։	ՑՀԹ	Ե	
	ՑԶ	Զ՝	
	ՑԶԱ	Է	
	ՑԶԲ	Ը	
	ՑԶԳ	Թ	
	ՑԶԴ	Ժ	
	ՑԶԵ	ԺԱ	
	ՑԶԶ	ԺԲ	
	ՑԶԷ	ԺԳ	
—Եղև խաւար արեգականն ի	ՑԶԸ	ԺԴ	
որէ ԺԵ (15)։[47]	ՑԶԹ	ԺԵ	
		ԺԶ	

	ՑՂ		ԺԷ	
	ՑՂԱ		ԺԸ	
	ՑՂԲ		ԺԹ	
—Երբեր Ռամաս Թագաւոր դսուրբ դասատուակն փրկչական պատկերին ի Կոս[ա]ն [դն]ո[ւ]պալիս։ Եւ նոյն ամի զՌամանոս իջուցին ի պատատէն, իւր որդին Սատփան։ Եւ ՑՂԶ (947) Թվականին եհար Փոկաս զՀամդան. և յունուարի ԻԶ (26)-ն բերին զՅոհանանու զաջ ձեռն ի քաղաքն Կոս[տ]ն[դն]ապալիս։	ՑՂԴ	ՕՕ	Ի	
	ՑՂԴ	Ա	ԻԱ	—Նիկիփաւս ԺԱ (11) Թագ[աւորէ]։
	ՑՂԵ	Բ	ԻԲ	
			ՕՕ	
	ՑՂԶ	Գ	Ա	—ԶԳերենիկն կալաւ Մայրն։[48]
	ՑՂԷ	Դ	Բ	
	ՑՂԸ	Ե	Գ	—Կարին առաւ։
			ՕՕ	
	ՑՂԹ	Զ		
	Ն	Է		
	ՆԱ	Ը		
	ՆԲ	Թ		
	ՆԳ	Ժ	Ա	—Տէր Խաչիկ Հայոց կաթողիկոս։
	ՆԴ	ԺԱ	Բ	ի Մոկաց Լե (35)։
		ՕՕ		
—Զմշկիկ Դ (3) ամ։	ՆԵ	Ա	Բ	
	ՆԶ	Բ	Դ	
	ՆԷ	Գ	Ե	
		ՕՕ		
—Վասիլ Թագ[աւորէ] ԿԸ (68)։	ՆԸ	Ա	Զ	—Մահ Գերենկի։[49]
	ՆԹ	Բ	Է	
	ՆԺ	Գ	Ը	
	ՆԺԱ	Դ	Թ	
	ՆԺԲ	Ե	Ժ	
	ՆԺԳ	Զ	ԺԱ	
	ՆԺԴ	Է	ԺԲ	
—Նդև խաւար արեդակ արէ ԺԴ (13) յաւուր չորեքշաբթու և դասաեղքն ի միջաւրէի երևէին։[50]	ՆԺԵ	Ը	ԺԳ	
	ՆԺԶ	Թ	ԺԴ	
	ՆԺԷ	Ժ	ԺԵ	
	ՆԺԸ	ԺԱ	ԺԶ	
	ՆԺԹ	ԺԲ	ԺԷ	
	ՆԻ	ԺԳ	ԺԸ	
	ՆԻԱ	ԺԴ	ԺԹ	
	ՆԻԲ	ԺԵ	Ի	
	ՆԻԳ	ԺԶ	ԻԱ	
—Գերու Թիւն Տարաւնոյ և քանդումն Հոռոմոց։[51]	ՆԻԴ	ԺԷ	ԻԲ	
	ՆԻԵ	ԺԸ	ԻԳ	—Գիսաւոր աստղն։
	ՆԻԶ	ԺԹ	ԻԴ	
—Իրն Խոսրով մտանէ ի Բաբելոն, սպանանէ զամիրայն Բաբելոնի և Ն[ի]նուէի և տիրէ աշխարհին։	ՆԻԷ	Ի	ԻԵ	
	ՆԻԸ	ԻԱ	ԻԶ	
	ՆԻԹ	ԻԲ	ԻԷ	
	ՆԼ	ԻԳ	ԻԸ	
	ՆԼԱ	ԻԴ	ԻԹ	
—Բակէն կոտրումն յԱպուտլիոյ։[52]	ՆԼԲ	ԻԵ	Լ	
	ՆԼԳ	ԻԶ	ԼԱ	
	ՆԼԴ	ԻԷ	ԼԲ	
	ՆԼԵ	ԻԸ	ԼԳ	
	ՆԼԶ	ԻԹ	ԼԴ	
	ՆԼԷ	Լ	ԼԵ	
—Մամլան մտանէ յԱպուբական և գնա մինչ յՈսանան։[53]	ՆԼԸ	ԼԱ	ՕՕ	—Տէր Սարգիս ի Վայոց Ձորոյ
	ՆԼԹ	ԼԲ	Ա	ամ ԻԴ (23)։
	ՆԽ	ԼԳ	Բ	
	ՆԽԱ	ԼԴ	Գ	
	ՆԽԲ	ԼԵ	Դ	
	ՆԽԳ	ԼԶ	Ե	
	ՆԽԴ	ԼԷ	Զ	
	ՆԽԵ	ԼԸ	Է	

	ՆԽԶ	ԼԹ	Ը
—Մամլնա կուսբուածն յԱպահունիս յամսեանն մեհեկի ԺԸ (10)։	ՆԽԷ	Խ	Թ
	ՆԽԸ	ԽԱ	Ժ
	ՆԽԹ	ԽԲ	ԺԱ
	ՆԾ	ԽԳ	ԺԲ
	ՆԾԱ	ԽԴ	ԺԳ
	ՆԾԲ	ԽԵ	ԺԴ
	ՆԾԳ	ԽԶ	ԺԵ
	ՆԾԴ	ԽԷ	ԺԶ
	ՆԾԵ	ԽԸ	ԺԷ
	ՆԾԶ	ԽԹ	ԺԸ
	ՆԾԷ	Ծ	ԺԹ
	ՆԾԸ	ԾԱ	Ի
	ՆԾԹ	ԾԲ	ԻԱ
	ՆԿ	ԾԳ	ԻԲ
—Եղև շարժումն յԱպահունիս և բաղում գեղս աւիրէ։	ՆԿԱ	ԾԴ	ԻԳ
	ՆԿԲ	ԾԵ	ԻԴ
	ՆԿԳ	ԾԶ	ԻԵ
	ՆԿԴ	ԾԷ	ԻԶ
			ԺԺ
—Եղև հրաման ի Վասլէ շինել զԿարին։	ՆԿԵ	ԾԸ	Ա
	ՆԿԶ	ԾԹ	Բ
	ՆԿԷ	Կ	Գ
	ՆԿԸ	ԿԱ	Դ
	ՆԿԹ	ԿԲ	Ե
—Թագաւորն Սինաքերեմ փոխէ զղաւառս Հայոց և որդւաքն իւրովք զնաց ի Հոռոմս։	ՆՀ	ԿԳ	Զ
	ՆՀԱ	ԿԴ	Է
	ՆՀԲ	ԿԵ	Ը
	ՆՀԳ	ԿԶ	Թ
	ՆՀԴ	ԿԷ	Ժ
—Թագաւորէ Կոս[ա]նդին նորին եղբայր ամս Գ (3)։	ՆՀԵ	ԿԸ	ԺԱ
		ԺԺ	
	ՆՀԶ	Ա	ԺԲ
—Ռամանոս ամս Գ (3) Թագաւ[որէ]։	ՆՀԷ	Բ	ԺԳ
	ՆՀԸ	Գ	ԺԴ
		ԺԺ	
	ՆՀԹ	Ա	ԺԵ
	ՆԶ	Բ	ԺԶ
--Թագաւորէ Միխայլ։	ՆԶԱ	Գ	ԺԷ
		ԺԺ	
	ՆԶԲ	Ա	ԺԸ
	ՆԶԳ	Բ	ԺԹ
	ՆԶԴ	Գ	Ի
	ՆԶԵ	Դ	ԻԱ
	ՆԶԶ		ԻԲ
	ՆԶԷ		ԻԳ
	ՆԶԸ		
	ՆԶԹ		
	ՆՂ		
	ՆՂԱ		
	ՆՂԲ		
	ՆՂԳ		
	ՆՂԴ		
	ՆՂԵ		

—Մահ Դաւթի կորապաղային։

—Տէր Պետրոս։

—Սպանաւ Թագաւորն Բուլխարացի գաւրաց իւրոց և տիրէ Վասիլն։

--Պատերազմի ընդ Թագաւորին Վրաց և բաղում արիւն հեղու և աւարէ զերկիրն նորա։

—Բերկրոյ հարուածսն և Ուրհայի մի ամ էր։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տես, և հմմտ. «Եսեբի Պամփիլեայ Կեսարացւոյ ժամանակագրանք երկմասնեայ», մասն Բ, Վենետիկ, 1818, էջ 260, «Սամուէլի քահանայի Անեցւոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 52։

2. Եվսեբիոս Կեսարացին այսպես է գրում. «Ցուդաս Գաղիղէացի յապստամբութիւն դիրէայս դրդուեաց» (նույն տեղ, էջ 260), հմմտ. Ս. Անեցի, էջ 52։

3. Ե. Կեսարացին գրում է. «Ի Հռոմ սաստիկ սով եղև, մինչև վաճառել յոռճկացն գրիւ մի՝ քսան և եօթն դենարի և կիսոյուշ» (նույն տեղ, էջ 260)։

4. Այս վկայությունը թերևս աղճատված է. Ե. Կեսարացու մոտ կարդում ենք. «Նուաղութիւն արեգական եղև. և Աւդոսաոս վախճանեցաւ» (էջ 262)։ Հմմտ. Ս. Անեցի, էջ 52։

5. Հմմտ. Ս. Անեցի, էջ 52, իսկ Ե. Կեսարացին հանվանե հիշում է այդ քաղաքները (նույն տեղ, էջ 262)։

6. Իրականում Տիբերիոսին հաջորդում է Գայոսը և ապա Կլավդիոսը, որոնց իշխանության տարիների գումարը կազմում է մոտավորապես 20 (հմմտ. Ե. Կեսարացի, նույն տեղ, էջ 266, 268, Ս. Անեցի, էջ 54, 55)։ Մեր հեղինակը այս երկու կայսրների իշխանության շրջանը միացրել է և նշել մեկի անունով, որը բնագրում չի ընթերցվում, բնագիրը վնասված լինելու պատճառով։

7. Հմմտ. Ե. Կեսարացի, նույն տեղ, էջ 268։

8. Խոսքը վերաբերում է հրեա պատմիչ Հովսեփոս Փլավիոսին, որի մասին Ե. Կեսարացին գրում է. «Փլաւիոս Յովսէպոս պատմագիր՝ եղև զօրավար հրէից ի պատերազմին» (նույն տեղ, էջ 272)։

9. Հրեաների ապստամբությունը տեղի է ունեցել 66—67 թթ.։

10. Տիտոսը Երուսաղեմի դրավումը ավարտել է 70 թ. սեպտեմբերին:

11. Ե. Կեսարացին ավելի պարզ է գրում. «Երկուց ամսոց անուանք փոխեցան, սեպտեմբերի՝ Գերմանիկոս. և հոքտեմբերի՝ Պարթենիկոս» (էջ 276), հմմտ. Ս. Անեցի, էջ 56։

12. Հմմտ. Ե. Կեսարացի, էջ 278։

13. Ե. Կեսարացին մի փոքր այլ բան է գրում. «Ներուսաս յախտէ ապականեցաւ ի Յաղուեստեան բուրաստանոն» (էջ 280)։

14. Ե. Կեսարացու մոտ կարդում ենք. «Ադրիանոս մահկանացու ջրդողութեամբ անկեալ վախճանեցաւ ի Բախէ» (էջ 286)։

15. Բնագիրը թերևս աղճատված է։ Ե. Կեսարացին այդ առթիվ գրում է. «Երուսաղէմացւոց եկեղեցւոյն առաջին ի հեթանոսաց եկաց եպիսկոպոս Մարկոս ամս ԺԶ, ի նուաղել ի Թլպատութենէն եպիսկոպոսաց» (էջ 286)։

16. Այս վկայությունը մի փոքր աղճատվել է։ Ե. Կեսարացին գրում է. «Մարկոս Աւրեղիանոս, որ և Բերոս Ղուկիոս Աւրեղիոս Կոմոդոս ամս ԺԹ» (էջ 288)։ Հմմտ. Ս. Անեցի, էջ 58։

17. Ե. Կեսարացու վկայությունը շեղվում է. «Կոմոդոս յանկարծակի վախճանեցաւ հերձեալ յապարանսն Բէստիղիանոսի» (էջ 204)։

18. Ս. Անեցին վերցնելով Ե. Կեսարացուց, գրում է։ «Որոդինէս ի դպրոց էր յԱղեքսանդրիայ», էջ 66, հմմտ. Եվս. Կեսարացի, էջ 298։

19. Տես և հմմտ. Ե. Կեսարացի, էջ 208։

20. Հռոմի հիմնադրումը հաշվում են 753 թ. ն. մ. թ., նշանակում է Հռոմի կառուցման 1000 տարին լրանում է մեր թվարկության 247 թ., կամ Փիլիպոս կայսր իշխանության 4-րդ տարում։

21. Այսինքն Անահիտին՝ «Անահտա»։

22. Տիեզերական երկրորդ ժողովը տեղի է ունեցել 381 թ. կ. գոլսում։ ՃՌ (150) վերաբերում է ժողովի մասնակիցների քանակին, դրա համար էլ կոչվել է «150-ի ժողով»։ Ս. Անեցին ևս գրում է. «ՃՂԶ Ս. ժողովն կոստանդնուպոլսի, ՃՌ-իցն՝ վասն հոգեմարտին Մակեդոնի» (էջ 07)։

23. Բնագրում անունը բաց է թողել, խոսքը վերաբերում է Զավեն կաթողիկոսին։

24. Խոսքը վերաբերում է Ավարայրի նշանավոր ճակատամարտին, որը տեղի է ունեցել 451 թ. մայիսի 26-ին։ Իսկ Քաղկեդոնի ժողովը կայացել է նույն տարում։

25. Այս բառը հեղինակը գուցե օգտագործել է «ինքնակալ» նշանակությամբ, նկատի ունենալով հունարեն «αυτοκράτωρ» բառը, թեև բառի կազմությունը նույնանում է լատիներեն «auctor» բառին, իսկ վերջինս ունի նաև առաջնորդ, վարիչ, սկզբնահայր, հիմնադիր, իշխան իմաստը։

26. Խոսքը վերաբերում է Հով. Բ. Դաբեղյան կաթողիկոսին, որը, ըստ Օրմանյանի, կաթողիկոս եղել է 557—574 թթ.։ Սա Դաբեղյան նահանգի, այժմ Կաղզվան, Սյունձեղվան գյուղից էր։ Բնագրի «Սնձվայ» բառը Սյունձեղվան անվան մի ձևն է, կան նաև այլ ձևեր, Սնձեղվան, Ձեղվան, Սյունձեղ, Սինեղ։

27. Եթե բացառենք այս վկայության այն մասը, թե Հուստինիանոս կայսեր 34-րդ տարում է գրվել հայոց թվականը, ապա մնացածը ստույգ է։ Ասողիկը ևս այդպես է գրում. «Եւ Հայք յայդմ ամի և յայդմ ժամանակի ի բաց կացին ի Յունաց հաղորդութենէ։ Եւ էր Յունաց թուականն ՃԴ՝ յէ ամէն Փիլիպպոսի կայսեր» (Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան պատմութիւն տիեզերական» Ս. Պետերբուրգ, 1885, էջ 83)։ Հռոմեական թվարկության առաջին հաղարամյակը վերջանում է 247 թ., այստեղից էլ (դրան ավելացրած) 304թ. կստատանք 551.

28. Պետք է լինի Տիրեր, իշխել է 578—582 թթ.։

29. Պարսիկները թված վայրերը նվաճել են տարբեր ժամանակներում՝ 604—605 թթ. նրանք նվաճեցին Դարուն, հաջորդ մի քանի տարում՝ Եդեսիան, Անտիոքը, Դամասկոսը և այլն, 614 թ. պաշարեցին և գրավեցին Երուսաղեմը. 619 թ.՝ Ալեքսանդրիան և Եգիպտոսը (акад. Я. А. Манандян „Маршруты персидских походов императора Ираклия", Византийский временник", III, 1950. էջ 133—134)։ Այս նվաճումները կատարել է Խոսրով Փարվեղի զորավար Շահվարազը։ Մանրամասնությունները տես Սեբէոսի մոտ («Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն» Ս�պԲ, 1879, էջ 76—82, 89—97)։

30. Հերակլ կայսրը պարսիկների դեմ կռվելու համար կ. Պոլսից դուրս եկավ 622 թ. ապրիլի 5-ին։ 622—623 թթ. ձմեռելով Պոնտոսում, 623 թ. ապրիլին շարժվեց Հայաստան, ապա Ատրպատական։ 627 թ, դեկտեմբերի 12-ին Նինվեի մոտ Հերակլի և Պարսից զորավար Ռահզադի միջև տեղի ունեցած վճռական ճակատամարտում պարսիկները պարտվում են, իսկ Ռահզադը սպանվում է։ Այս անհաջողություններին ավելանում է դահակալական պայքարը, թաղավոր է դառնում Կավատը, որը 628 թ. փետրվարի 29-ին սպանում է Խոսրով Փարվեղին (акад. Я. А. Манандян „Маршруты персидских походов императора Ираклия", նույն տեղում, էջ 135—153)։

31. Եթե ճիշտ է բնագրի մեր վերականգնումը, ապա 663 թվի զատիկն ընկնում է ապրիլի 2-ին և այդ օրն էլ իբր խավարել է արեգակը, սակայն աստղաբաշխական տվյալներն այլ բան են ասում, համաձայն պրոֆ. Օպպոլցերի հաշվումների 663 թվին արևը խավարել է մայիսի 12-ին և նոյեմբերի 5-ին („Canon der Finsternisse" von Hofrath Prof. Th. Ritter v. Oppolzer. [Denkschriften der kaiserlichen Akademie der Wissenschaften Mathematisch — Naturwissenschaftliche classe], zweiundfünfzigster Band, Wien, 1887, էջ 180)։

Եթե ընդունենք, որ հայոց 112 թվականը համապատասխանում է մեր թվարկության 663 թվին, ապա պրոֆ. Օպպոլցերի տվյալների համաձայն արեգակը այդ թվին խավարել է մարտի 22-ին, ապրիլի 21-ին, սեպտեմբերի 14-ին և հոկտեմբերի 14-ին (նույն տեղ, էջ 180), նույն տարվա զատիկն էլ կընկնի ապրիլի 6-ին։

32. Տես, Ասողիկ, էջ 101։ Դավթի նահատակությունն Ասողիկը նշում է Վարդանակերտի ճակատամարտի տարում, իսկ վերջինս տեղի է ունեցել 703 թ.։

33. Ս. Անեցին 724 և 727 թվերի միջև հիշում է «խողասպանութիւն» դեպքը (էջ 87, անո և հմմտ. «Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ պատմութիւն տիեզերական», Մոսկվա, 1861, էջ 102). մեր ընդարում եղածն արդյոք այս բառի աղճատված ձևն է, թե՞ մի ուրիշ բան։ Ինչպես հայտնի է, խալիֆ Եզիդ II-ը, մի ֆանատիկոս մարդ, կարգադրում է կոտորել խողերին, որպես «անսուրբ» կենդանիներ (տես, Ղևոնդ երեց, Պատմութիւն հայոց, ՍՊԲ, 1887, էջ 100)։

34. Մանազկերտի ժողովը տեղի է ունեցել 720 թ., (տես, Ասողիկ, էջ 102—103), ժողովի կանոնները տես, Ս. Անեցի, ծանոթ. 36, էջ 287—288։

35. Իմա, Վահան Գողթնեցի, 706 թվին նախճավանում սպանված հայ նախարարներից մեկի, Գողթանի իշխան Խոսրովի որդին, որը 707 թվին, տակավին չորս տարեկան հասակում, ուրիշների հետ գերվեց և պահվեց Դամասկոսում։ Այստեղ նա դառնալով խալիֆի հետևորդ, վերանվանվում է Վահան։ Հետաղայում, 719 թվին հատուկ թույլտվությամբ և կարճ ժամանակով գալիս է Հայաստան, հայրենի գավառը և հրաժարվում ետ վերադառնալուց։ Այդ բանի համար նրան նահատակում են 737 թվի (Թ. Արծրունի, էջ 404) մարտի 18-ին, ուրբաթ օրը (տես. Օրմանյան «Ազգապատում», էջ 861, մանրամասնությունները նույն տեղում §§ 549, 580, 585—589). Հայմամուրքում նահատակությունը նշված է 736 թ. մարտի 28-ին (№ 1512, էջ 388բ, իսկ նահատակության պատմությունը՝ էջ 386ա—388բ)։ Վարբարանությունը տես, «Սոփերք հայկականք», Վենետիկ, հատ. ԺԳ, էջ 61—91։ Վահանի նահատակությունն տարեթվի, ինչպես մեր ընդարի, այնպես էլ Ս. Անեցու (էջ 87) վկայությունները ստույգ չեն։

36. Մեր մատենագիրներից միայն Ղևոնդ պատմիչն է իմաստավորում այս բառը։ Նա նկարագրելով արաբական խալիֆաթի հարկային ծանր քաղաքականությունը, Տրդատ Ա Օդմսեցի կաթողիկոսի մասին, ուշադրավ հետևյալ տեղեկությունն է հաղորդում. «Թէպէտ և բաղում անդամ բողոքէր իշխանն Սահակ և հայրապետն տէր Տրդատ որ ի տանէ Նախարարացն Վանանդ դաւասի՝ այլ ոչ լուաւ զաղաղակ նոցա Եզիտն որ ի վերայ հարկին էր յաշխարհն». («Պատմութիւն Ղեւոնդեայ մեծի վարդապետի հայոց», էջ 136, ընդգծումը մերն է—Վ. Հ.)։ Այս երկու վկայությունների համաձայն նշանակում է Տրդատ Ա Օդմսեցին ունեցել է ազնվական ծագում։ Եվ եթե ժամանակագրի վկայությունը բանասիրական առումով աղերս չունի Ղևոնդ երեցի վերոհիշյալ վկայության հետ, համենայն դեպս դա ցույց է տալիս առաջարկվող բնագրի բազմաթիվ տեղեկությունների հավաստի լինելը։ Ոչ միայն մեր մատենագիրները (Ասողիկ «Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 105, Ս. Անեցի, էջ 87 և այլն), այլև կաթողիկոսների հնագույն ձեռագիր ցանկերը (Հովհ. Դրասխանակերտցու ցանկը № 579, էջ 197բ, իսկ սրա երկու տարբերակը նշում են 27 տարի №№ 1486, էջ 92բ, 2966, էջ 89ա, Անանուն ցանկեր №№ 7117, էջ 93ա, 1721, էջ 132բ և այլն) որա կաթողիկոսության տարիները նշում են 23 տարի, մինչդեռ մեր հեղինակը նշում է 20 տարի։ Մ. Օրմանյանը ընդունում է 741—761 թվերը («Ազգապատում», էջ 869)։

37. Համառոտ այս վկայությունը հավանարար վերաբերում է արարների դեմ 774—775 թթ., հայերի համաժողովրդական ապստամբության արձագանքներից մեկին։

38. Բնագրում նոր ձեռագրով գրված է. «տէր ողորմեայ, տէր ողորմեայ»։

39. Արաբ զորավար Բուղան Հայաստան արշավել է 852 թ.։

40. Թ. Արծրունին գրում է, որ Բուղան Վասպուրականում ասպատակելուց հետո, գնաց Դվին ձմեռելու. «և արձակեաց զզօրսն իւրաքանչիւր զօրագլխաւք եկեալց առ նա յամենայն ազգաց յաշխարհէն Հայոց՝ երթալ ձմերել յիւրաքանչիւր տեղիս բնակութեանց...», («Թովմայի վարդապետի Արծրունւոյ պատմութիւն տանն Արծրունեաց», Թիֆլիս, 1917 թ., էջ 276)։

Նկատի ունենալով այս հանդամանքը, ըստ երևույթին խոսքը վերաբերում է արաբական նման մի զորագնդի և հայերի միջև 852—853 թթ. տեղի ունեցած ընդհարումներից մեկին, որի մասին իմանում ենք այս բնագրով։ Կաճկաքարը գյուղ է Վանանդում. այլ առիթով հիշում է Ասողիկը. «Եւ ապա եկեալ Հոռոմդի արանցն ի Վանանդ ի գիւղն Կաճկաքար՝ կոտորեցան ի ձեռն Սահակայ որդւոյ Իսմայիլի» (էջ 144)։

41. Որդի Բուրդկայ, Մամիկոնյանների վերջին ներկայացուցիչը։ Բուղան գերեց և ուղարկեց Բաղդատ (Թ. Արծրունի, էջ 310), բայց բանդից փախավ և փորձում էր ամրանալ Բագրևանդի Գաղանաձակ բերդում, սակայն «զկնի եօթն աւուրց մեռանի» (Վ. Արևելցի, էջ 111)։

42. Այս Արասը հայոց սպարապետ Սմբատ Խոստովանողի (Ս. Անեցի, էջ 93) կամ Արլարասի անդրանիկ որդին էր, Աշոտ Ա Բագրատունի թագավորի եղբայրը։ Այստեղ նշված կռվի մասին Թ. Արծրունին հիշում է մութ կերպով. «յիշեցուցանէր զոր ինչ զործեաց ընդ Աշոտ և ընդ աշխարհ նորա, յուշ առնէր և զքաջութիւն արիութեան նորա, և դի չգօրեաց կալ ընդդէմ նորա...»։ (էջ 282)։

43. Բնագրում այնուհետև այլ ձեռագրով ավելացրել են. «Տէր Յիսուս, Քրիստոս, միածին որդի Աստուծոյ, ողորմեայ կատային, Շրուանշահին և Գրիգորոյ և իւրոցն ամենայն ի կենդանեաց և մեռելոց ասացուք, ամէն ի քէն տէր ողորմէ կեցո տէր»։

44. Այս վկայությունը վերաբերում է Սմբատ Ա-ի և կայսիկների (Ապահունեաց դավառում) միջև տեղի ունեցած կռվին։ Թ. Արծրունին իր պատմության 3-րդ գրքի ԻՐ գլխի առաջին մասում (էջ 394—396), բավական մանրամասն է խոսում այս կռվի մասին, որտեղ տարեթիվը, ինչպես և մեր բնագրում, նշված է 902 թ. ներքո։ Սակայն Թ. Արծրունին չի տալիս ճակատամարտի վայրը, մինչդեռ մեր բնագիրը այն նշում է Ուշի կամ Ցուշի։ Թ. Արծրունին այլ առիթով այն կոչում է դաշտ, որը գտնվում է Մանդաղվյան նահանգի վերին մասում. «Եւ եղև յետ մեծ պատերազմին, որ յառաջ քան զդրուցացդ գրելոյ ելին, ի գլուխս Մանազաւեան նահանգին և Ցուշոյ դաշտին»...(էջ 413)։ Ցուշի դաշտը պետք է լինի Ռշտունիքից դեպի արևմուտք, այժմյան Կարճկան—Սպարկերտի սահմաններում։

Զաքարիա սարկավագը ևս հիշում է Ցուշի անունով բնակավայր, որտեղ Հովանավանքը հողային տարածություն է ունեցել...«ի Ցուշի գՍերմակորուսան՝ Բ օր. («Պատմագրութիւն», հատոր երրորդ, Վաղարշապատ, 1870, էջ 29), իհարկե Արագածոտն գավասի այս գյուղը տարբեր է Թ. Արծրունու հիշած Ցուշի դաշտից։

45. Դեպքերին ժամանակակից պատմիչ Հովհ. Դրասխանակերացին մանրամասն նկարագրելով Աֆշինի արշավանքը Հայաստան, չի նշում տարեթիվը («Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերաեցւոյ պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 166—167, հմմտ. նաև Ասողիկ, էջ 161)։

46. Տես և հմմտ. Ասողիկ, էջ 170։

47. Շարժական տոմարի հաշվով արևի խավարումը պետք է տեղի ունեցած լինի մեր թվականության 939 թ. հուլիսի 12-ին, ուրբաթ օրը, բայց ըստ պրոֆ. Օպպոլցերի հաշվումների՝ հուլիսի 19-ին (էջ 206)։

48. Ասողիկը ևս հիշատակում է այս անձնավորության մասին (էջ 188, 198, 234)։ Սալարյան առանձին դինաստիան հաջորդեց Սաջյաններին, որոնք իշխում էին Արդարիլից հարավ, Ադրբեջանի և Գիլանի միջև բնակվող Դելմիկներ լեռնային ցեղին։

49. Խոսքը վերաբերում է Դավիթ Արծրունի թագավորի (909—943 թթ.) որդի Աշոտ Դերենիկին։ Ասողիկի համաձայն վերջինիս հայրը՝ Դավիթ Արծրունին մահացել է 943 թ. (էջ 281), որին հաջորդել է որդին՝ Դերենիկը, իշխելով 17 տարի, մահացել է 958 թ. (էջ 281)։ Ըստ երևույթին հավաստի է Ասողիկի վկայությունը, եթե Դերենիկի թագավորության տարիները հաշվենք ոչ թե 17, այլ 15, ընդունելով հայկական «է» (ժէ) և «ե» (ժե) տառերի սովորական շփոթումը (ինչպես կարծում է ակադ. Ստ. Մալխասյանցը Ասողիկի հրատարակության 146 ծանոթագրության մեջ, էջ 393), այստեղից էլ կոտանանք 392 (943)+15=407 (958)։

50. Ասողիկը ևս հաստատում է տարեթիվը, առանց ամիսը և օրը նշելու (էջ 183)։ Շարժական տոմարի համաձայն հայոց 415 թ. տրե ամսի 13-ը կհամապատասխանի մեր թվականության 966 թ. հուլիսի 9-ին, իսկ վերջինս ոչ թե չորեքշաբթի է, այլ երկուշաբթի։ Նշանակում է ինչ որ սխալ կա։ Ասողիկի պատմության ձեռագրերից մեկը ունի ոչ թե հայոց 415, այլ 416 (էջ 183)։ Ս. Անեցին ևս հաստատում է այս վերջին դրությունը, ըստ նրա արևը խավարել է մեր թվականության ՉԿԹ (969) թվին (էջ 100), և որովհետև նրա մոտ հայ և մեր թվականության հարաբերությունը 1:553 է, ուստի 969 թ., եթե հանենք 553, կոտանանք դարձյալ 416։ Այս հաշվով 967 թ. հուլիսի 9-ը կլինի երեքշաբթի։ Եթե հաստատ է բնագրի չորեքշաբթի օրը, այն ժամանակ արևը խավարած պետք է լինի հայոց ՆԺԶ թվի տրե ամսի ԺԴ (14)-ին, որը կհամապատասխանի 967 թ. հուլիսի 10-ին, իսկ այդ օրն իրոք չորեքշաբթի է, և իսկապես, պրոֆ. Օպպոլցերի հաշվումները ևս հաստատում են, որ արևը խավարել է 967 թ. հուլիսի 10-ին (տես, նույն տեղ, էջ 208)։ Այսպիսով, պետք է սրբագրել մեր բնագրի ոչ միայն «տրէ ԺԴ»-ն դարձնելով «տրէ ԺԴ» (ըն-

դունելով «Դ» և «Դ» տառերի շփոթության սովորական փաստը), այլև «ՆԺԺ»-ն՝ «ՆԺԶ», սրպեսզի ստանանք 967 թ. հուլիսի 10, չորեքշաբթի։

51. Այս վկայությունը վերաբերում է Խլաթի ամիրապետ Բատի ասպատակություններին։ Ասողիկն այդ մասին գրում է. «Վերըստին շինէ (Բատը—Վ. Հ.) զքաղաքն Մանազկերտ. և սրով և դերութեամբ անմարդացոյց զդուռն Տարօնոյ, յաւարի առեալ զքաղաքն Մուշ...» (էջ 192)։ Բնագրի երկրորդ մասը վերաբերում է Վասիլ II-ի դեմ Վարդ Սիկլառոսի կազմակերպած ապստամբությանը և կռիվներին։

Ժամանակագրության մեջ վերոհիշյալ երկու դեպքն էլ դրված են միևնույն տարեթվի տակ՝ 975։ Սակայն 975 թ. վերաբերում է միայն Տարոնի գերեվարությանը. որ այս ճիշտ է, երևում է Ասողիկի վկայությունից, վերջինս Վարդ Սիկլառոսի ապստամբությունը և կռիվները նշելով 976 թ., Տարոնի գերևարությունը գնում է «և մինչ զայսս» (էջ 192), նշանակում է մինչև 976 թ.։ Այս դեպքերի մասին հիշում է նաև Ա. Լաստիվերտցին (տես, «Պատմութիւն», Վենետիկ, 1901, էջ 21), Մ. Ուռհայեցին («Ժամանակագրութիւն», Վաղարշապատ, 1898, էջ 33—34)։

52. Սոյն կռվի մասին Ասողիկը գրում է, որ Դողթանի ամիրա Աբուտլփոն արշավում է Վասպուրական, իսկ հայերի բանակը գնում է Աբուտլփոյին ընդառաջ և իջևանում «ի Ծուաշ գաւառի, ի տեղին որ կոչի Բակեաբ...» (էջ 190), որտեղ և լինում է կռիվը։ Այս նույն դեպքը Մ. Ուռհայեցին նշելով հայոց 425 թ. ներքո և մանրամասն պատմելուց հետո (էջ 30—33) ավելացնում է. «Այս ինչ եղև ի Ծուաշ գաւառին Հայոց աշխարհին, ի դեղն՝ որ կոչի Բակ, սահմանակից Վասպուրականայ» (էջ 33)։ Կարծում ենք, խոսքը վերաբերում է միևնույն տեղանվան, որը X դարում, Ասողիկի ժամանակ, եղել է ըերդ և կոչվել է Բակեաբ, իսկ հետագայում Մ. Ուռհայեցու ժամանակ, XII դարում, այն դարձել է գյուղ և կոչվել Բակ։ Անվան հենց այս ձևն էլ գործածել է մեր հեղինակը։ Այս գյուղը կարելի է տեղագրել Խոյ (Հեր) քաղաքից հյուսիս, պատմական Ծուաշռոտ գավառում։

53. Այս վկայությունն ինչ որ եղելությունների արձագանք է, բայց ստույգ չկարողացանք որոշել։

54. Ատրպատականի էմիր Մամլունի այս արշավանքի մասին մանրամասն խոսում է Ասողիկը, որի համաձայն հայ և վրաց միացյալ զորքը հասնում է Ապահունեաց գավառի Ծմբո գյուղը, մի բարձրադիր վայրում ամրանում Մամլունի բանակի դիմաց (էջ 269—274)։ Հայ-վրացական և արաբական զորքի միջև առաջին ընդհարումը, ըստ Ասողիկի, տեղի է ունենում «յամսամտին արեգ ամսոյ, յերեքշաբաթուոջ աւուր ընդ առաւօտանայն...» (էջ 271), ըստ այսմ կստանանք 993 թ. հոկտեմբերի 18-ին (Հայոց 447 թ. արեգ ամիսը սկսվում է 998 թ. հոկտեմբերի 17-ին երկուշաբթի), այդ օրն էլ իրոք երեքշաբթի է։ Մինչդեռ ժամանակագրության համաձայն Մամլունի պարտությունը տեղի է ունենում Հայոց 447 թ. մեհեկի 10-ին, որը կհամապատասխանի 998 թ. սեպտեմբերի 26-ին։ Մ. Ուռհայեցին ևս հիշում է այս դեպքերը (էջ 34—37), նշելով Հայոց 432 և 434 թվերի արանքում։ Տես և հմմտ. Ս. Անեցի, էջ 104։

55. Խոսքը վերաբերում է Տաո-Կղարջեթի կյուրապաղատ Դավթի մահվան։ Համաձայն Ասողիկի, Դավիթը «վախճանեցաւ յաւուր մեծի փրկչական Զատկին, ի ՆԽԹ. թուականին» (էջ 275)։ Ըստ այսմ 1000 թ. մարտի 31-ին։ Հմմտ. Ա. Անեցի, էջ 104։

56. Տես և հմմտ. Մ. Ուռհայեցի, էջ 48—49, Ս. Անեցի, էջ 107։

57. Մի տարվա տարբերությամբ (1028 թ.) Ս. Անեցին նշում է, որ «ի սոյն ժամանակի առաւ Բեկրի ի Տաճկաց» (էջ 106), իսկ ըստ Ա. Լաստիվերտցու Միխայիլի թագավորության ժամանակ «Եղև մեծ կոտորած զօրացն Հոռոմոց ի բերդաքաղաքն, որ կոչի Բերիբի։ Եւ այնուհետև նա նկարագրում է այդ անցքը («Պատմութիւն Արիստակեայ վարդապետի Լաստիվերտցւոյ», էջ 37—38)։ Խոսքը հավանաբար վերաբերում է սելջուկների ասպատակություններից մեկին։

58. Բնագրում 163ա էջի երկրորդ կարգի սյունակների աջ կողմում, վերից վար ուղղությամբ, ժամանակագրություն կազմողը թողել է հետևյալ հիշատակարանը «Տէր Յիսուս Քրիստոս միածին որդի Աստուծոյ ողորմէա Գիշին և Ազիզմամին և գաւակաց նոցա՝ տէր Սարգսի[ն], կարապետին և Մելքիսեդեկա և մեղաւոր աւագէրէց Յովաննէսի, որգուոյ Գիշի, որ զգրկունքս գնեցի և յետ ՄԾԴ (254) ամի, զցանկս յաւրինէցի ի ՈՀԴ (1225) թուականիս։